

ԳԵՂՐԳ ՏԵՂ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՅԱԿՈՎԼԱՅԻ,

ՄԱԿԱՆՈՒ ՏԻՐԱՅՈՒ. ԺԲ. ԴԱՐ

(Նորայայի վանքական դիմանկարի առիթով)

Մաշտոցեան Մատենադարանի (այսուհետեւ՝ ՄՄ) մեր աւագ գործակից Սամսոն Լալաֆարեանը, կարճատեւ հիւանդութեամբ մահուան մահճին դամուած ժամանակ՝ 1994 թ. Յուլիսի 26-ին մեզ հրաւիրեց, ցաւօք, ի վերջին տեսութիւն (վախճանուեց Օգոստոսի 1ին) եւ յանձնեց Հայերէն 6 եւ վրացերէն 2 ձեռագրական պատառիկ-մասունք, որոնք ստացել էր յայտնի պատմաբան եւ հնագէտ Սմբատ Տէր-Աւետիսեանի կնոջից: Բնականաբար, բոլոր գրանցեցինք Մատենադարանի համապատասխան հաւաքածուների մէջ:

Վերջերս առիթով կրկին անդրադարձանք նրանցից առաւել ուշագրաւ մէկին՝ Հայերէն պատառիկների հաւաքածուի Հ^մ 2098 միաւորին, որ, մայր ձեռագրից կոպտօրէն պատռելով Հանած լինելու պատճառով՝ ճախից անկանոն եղրագիծ ունեցող, ամենալայն մասերում 19,5x15,8 սմ չափսի մագաղաթէ մի թերթ է եւ որի առաջին երեսը սկզբնապէս եղել է չգրուած, բայց այժմ ունի ուշ շրջանի երկու մակագրութիւն. ա. ԺԲ. Դարի վերջի նոտրանման շղագրով եւ սեւ թանաքով՝ «Խորհուրդատետր Սրբոյ Պատարագի, զոր ժամացար քահանայք միշտ ընթեռնուն ի ժամ Սրբոյ Պատարագին. ուրեմն յիշեա, ո՛վ սուրբ Հայր, կաթողիկոս, եպիսկոպոս եւ քահանայ», բ. շղագիր, մանուշակագոյն թանաքով՝ «Թղթատիր, նիւթն եւ յիշատակն գրած [է]. Վահրամ վարդապետ Կանաչեան, միաբան Կտուց անապատի, 1904 վ[րկչի] թ[ուականի] Յունիս 28: / Յիշատակ է գիրքս Կտուց անապատի / 231երդ»:

Ըստ առաջինի՝ պատառիկի մայր ձեռագիրը եղել է Խորհրդատետր (Պատարագամատոյց), ըստ երկրորդի՝ եղել է Կտուց անապատի¹ Հ^մ 231 ձեռագիրը եւ ունեցել է յիշատակարան, որ 1904 թ. օրինակել է նոյն Կտուցի միաբան Վահրամ վ. Կանաչեանը:

¹ Յայտնի է, որ Սմբատ Տէր-Աւետիսեանը (18 Ժ. 1875 - 27 Բ. 1943) «1915-17ին, [Դուռաստանի] կամերական գիտութիւնների ակադեմիայի գործութմամբ, Վանի, Բիթլիսի ու Էրզրումի վիլայէթներում հաւաքել է ասելի քանի հազար ձեռագիր, պատմ. վանքարի և ազգագր. միտքեր». տե՛ս Հայկական տվյալներ համրագիտարան, հ. 11, Երեւան, 1985, էջ 663. հմնն. Օճճիկ Եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները. Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, Հատոր Ա, Կազմեցի՛ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթարեան, Ներածութիւնը՝ Օ. Եցանեանի, Խմբագրութեամբ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացակեանի, Երեւան, 1965, սիմ 94-5. Վասպուրականի հաւաքածուների մասին՝ սիմ 93-105:

Ակնյայտ է եւ այն, որ այս թերթը 1904 թուականից յետոյ է անջատուել² մայր ձեռագից, որի այլ հետքեր երկար փնտրեցինք Վասպուրականի ձեռագրերի 1910 ական թուականներին երուանդ Լալայեանի արած՝ անտիպ մնացած նկարագրութիւնների եւ նրանց կանոնագրութիւններին մեր ունեցած նիւթերի, Ղեւոնդ զ. Փիրղաչէմեանի գրառած յիշատակարաններից մեր ունեցած նիւթերի³ մէջ եւ չգտանք (ուրեմն՝ նրանք այս «Խորհրդատերը» չեն տերի ստուար հասորների⁴ մէջ) ունեցած նիւթերի մէջ ունեցած ամերիկան պետական, համալսարանական, մասնաւոր⁵ եւ անձնական⁶ հաւաքածուների մէջ. Կրկին չկար, ուրեմն, ամենայն հաւանականութեամբ, ձեռագիրը չի պահպանուել:

Այս, Կտուց անապատի եւ Վասպուրականի այլ վայրերի ձեռագրերի զգալի քանակի չափականուածութեան հանրայայտ պատճառը հետեւեալն է. Վասպուրականի ձեռագրականուածութեան էջմիածին փոխադրած՝ Լիմ անապատի վերջին վանահայր Թովհաննէս վ. Հիւսեանը բերն էջմիածին մասին գրել է. «Ունէր նաեւ մօտ հինգ հարիւր կտոր ձեռագիր մակտուցի ձեռագրերի մասին գրել է. «Ունէր նաեւ մօտ հինգ հարիւր կտոր ձեռագիր մակտուցի տեսաններ, որոնցմէ 320 կտոր միայն յաջողուցաւ ինձ բերելու էջմիածին, իսկ մնացածը՝ ամենաընտիր մասը, եկեղեցական բոլոր հնութեանց եւ սրբութեանց հետ, մնացին եւ բաժին եղան թիւրքերուն, չնորհիւ նոյն անապատի միաբան, անհեռատես եւ կամակոր Ստեփին արելային, որուն դարձեալ՝ նման Վարագայ գործակալ Պետրոսին, շատ խնդրեցի փան արելային, որուն դարձեալ՝ նման Վարագայ գործակալ Պետրոսին, շատ խնդրեցի գուցնել ինձ պահարանը (իմա՝ թաքստոցը - գ. Տ-Վ.) եւ յանձնել էջմիածին փոխադրելու, ցուցնել ինձ պահարանը (իմա՝ թաքստոցը - գ. Տ-Վ.) եւ յանձնել էջմիածին փոխադրելու, սակայն չլսեց եւ չհամաձայնեցաւ: 1918 թուին Վան վերադարձող ժողովրդեան երկրորդ սակայն չլսեց եւ չհամաձայնեցաւ:

² Մեր մկարազարդ ձեռագրերից մամրամկարմերի, խորամմերի, կիսախորամմերի, ճակատազարդերի, լուսանցային մկարմերի, լուսանցազարդերի եւ յիշատակարամմերի պատում-կտրում-համմամ դէպքերը բարեկամ շատ են, մոլուկս և յիշատակազրութիւնների մէջ շատ են ձեռագրերն այդ եղանակով եղծողներին ուղղուած զգուշացում-մաէծքները: Յարութիւն Քիւրտեամ իր ամմական հաւաքածուի միատրումներից թերթը կամ դրանց մասեր կտրող մերի ձեռքը կոչում էր «չորմայիք». յոդուածին հետազա շարադրամքի մէջ տեսնելով այս պատուիկի զիտական և զեղարուսական մեծ արժեքը, զրա պատուի ձեռքին այս որակումը չպէտք է տամբ, որովհետեւ եթէ ապազուու բուն ձեռագիրը եղանակի պատահմունքով չլայտմարերուի, ապա առաջմ պէտք է արձանագրենք, որ ասոյ Շոյմային պատահմունքով փրկուած է գոնէ: այս մի արժէքատր թերթը:

³ Մրանց վերաբերու մամրամամմերը տեսն մեր «Հայերէն ձեռագրերի կորտուած հաւաքածումերի ցուցակը հրատարակման խմբիրը (Նախանկան հաղորդում. Լիմ ամապատի 1282 թուակամի վերագտնուած նոր կուկարամի աղիթով). - Հշմիածիա, 2003/Ա., էջ 57-60:

⁴ A Catalogue of Medieval Armenian Manuscripts in the United States, By Avedis K. Sanjian, University of California Publications. Near Eastern Studies, 16. University of California Press, Berkeley, Los-Angeles, London, 1976 (XIX + 863 էջ. Ակարագրուած՝ ԱՄԷի 13 ամանամմերի եւ Սոնկալիա (Կամադա) 35 հաստատութիւնների պատկանող 180 ձեռագիր), Medieval Armenian Manuscripts at the University of California, Los Angeles, [by] Avedis K. Sanjian, with contribution by Alice Taylor and Sylvie L. Merian and with the assistance of S. Peter Cowe, University of California press, Berkeley, Los Angeles, London, 1999 (382 էջ, 34 մկան, Ակարագրուած՝ 91 միաւոր). Անեն՝ Treasures in Heaven, Armenian Illuminated Manuscripts, Edited by Thomas F. Mathews and Roger S. Wieck, The Pierpont Morgan Library, New York, Princeton University Press, 1994 (231 էջ, Ակարագրուած է ցուցահանդէսային 88 միաւոր):

⁵ Նկատի ունենք Եշանաւոր երկու Յարութիւնների՝ Հազարեամի և Քիւրտեամի հաւաքածումերը. ձեռքի տակ ունենք առաջինի՝ Օսմակ Եզանեամի կազմած, երկրորդի՝ տիրոջ կազմած և մեր խմրագրած-լրացրած ամտիաց ցուցակները:

⁶ Հայտ O. Եզանեամի ծցքին հաջուումների (տես Աշ. աշխ., սիւճ 100), Կտուց անապատից Էջմիածին է բնութեամբ 202 ձեռագիր, այսինքն՝ երկու հիմքերորդ մասը:

նահանջին 10-12.000 գերի մնացողներէն ողջ մնացող 400 անձեր, երբ... ղրկուեցան Հայաստան, նոցա պատմութեամբ, որոնք ականատես եղած են եւ այժմ ողջ կան ի Հայաստան, թիւրքեր մտնելով կղզիներ, կը խուզարկեն եւ կը գտնեն պահարանները՝ թէ՛ Կտուց անապատին ամբողջապէս եւ թէ՛ Վարագայ այն պահարանը, որը չուզեց յայտնել Պետրոսը, եւ եղած ամբողջ հարստութիւններն ու ձեռագրերն կամբարեն Վան. գերի մնացող հայերէն Արաքն կիրակոսեանի եւ մի քանի ուրիշներու կը կանչեն իմանալու, քննելու, թէ ի՞նչ գրքեր են ատոնք, որոնք կիսագրագէտ ըլլալով, միայն այսքան կը հասկացնեն, թէ «Այս գրքերը ձեռքով գրուած են, հին գրքեր են, տպուած չեն՝ որ մենք կարենանք կարդալ եւ ձեզ հասկացնել» եւ այլն:

Այս եղելութիւնը պատմողներու համեմատ՝ ամբարուած այդ հնութիւններն եւ ձեռագրերը փոխադրուած են, բայց իրենք չեն կրցած իմանալ՝ ո՞ւր արդեօք՝ Անկիւրի՛, թէ՝ ուրիշ քաղաք մը»⁷: Ռուսական զօրքի նահանջին յաջորդած վերագրաւումից յետոյ՝ 1915 թ. վերջիրին, ձեռագրերն ու հնութիւնները հաւաքելու եւ փրկելու համար Վասպուրականում շրջող մտաւորականները⁸ մեր բոլոր եկեղեցիներում եւ վանքերում միշտ տեսնում էին «այստեղով թուրքն է անցել» պատկերը (առե՛ս նկ. 1)⁹: Մեր պատառիկից երեւում է, որ նրա մայր ձեռագիրն «ընտիր» է եղել, ուստի եւ պէտք է «ամենաընտիր մասի, եկեղեցական բոլոր հնութեանց եւ սրբութեանց հետ» մնացած լինի չյայտնաբերուած թաքսուցում եւ անցած թուրքերի ձեռքը¹⁰:

Պատառիկի երկրորդ էջին կայ 14,7x10,3 չափսի կարմիր շրջանակով (շրջանակի գծի լայնքը 3 մմ)՝ ձեռնադրութեան տեսարան պատկերող մանրանկար. ձեռնադրողը եւ ձեռ-

⁷ Յովհաննէս վ. Հիւնան, Համառու Ակարազրութիւն Վասպուրականի մէշ եղած մի քանի նշանաւոր կամքերու, որոնք մինչեւ 1915 թուակ/ամ] շէն և միաբանական վանքեր էին. և իրենց մէշ գոնուած ազգ/ային/-նկեղեցական թաճագրծէք հնութիւններն, հարստութիւններն և հարիւրատր դարաւոր մնացածէք գրչագիրը կը մնային ամկորուստ. Մաշտոցնան Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակ Հմ 92, էջ 9թ-10թ (շուտով տպագրելու ենք Ակարազրական պատերի ամրողական բազիրը):

⁸ Նիկողայոս Մատը, Նիկողայոս Աղոնցը, Յովսէփ Օրելիշ և Սմբատ Տէր-Աւետիսեանը Ռուսական կայսերական հնագիտական ընկերութեան նշանակած արշավասրի անդամներ էին, իսկ Յովհաննէս վ. Հիւնանը Գէորգ Ե. կայողիկոսից յանձնարարութիւն ունեցի ձեռագրերը ժողովներու և Էջմիածին փոխադրելու:

⁹ Լուսանկարի բնափիր գտնում է Ռուսաստանի Գիտութիւնների Ակադեմիայի Հազիսութեան ինստիտուտի պատմում «Սմբատ Տէր-Աւետիսեանի ալրուն». պատմէնը 1980ական թօ. Երևան է բերուել վաստակաշատ պատմաբանասէր Պարոյ Մուրադեանի ջանքերով:

¹⁰ Վերքերս յաճան ենք լուս ո՞չ-հրապարակային խօսակցութիւններ այն մասին, որ Ամկարայի գրադարանային-դիանական հաստատութիւններում կան եօթ փակի տակ պամուտ հազերէն հազարաւոր ձեռագրեր: Արևմտահայութեան Ակատոմամբ թուրքերի կազմակերպած անօրինակ եղենով փաստը ճամաչել տալու և զրաշարումակութիւն-պահանջատիրութեամ առաջին խնդիրը պէտք է լինի բռնագրաւուած այդ ձեռագրերի՝ մեր ժողովրդի մշակույթի և պատմական յիշողութեամ անկողիարիննի յուղադամների վերադարձը: Այս գաղափարն անպայման համեմատելի է այն տիսուր փաստի հետ, որ բոլորով վերջերս Գերմանիան Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի գրադարանից «վերստացաւ հարիւրատր ձեռագրեր և հազարաւոր տպագիր գրքեր, որոնք գուցէ պէտք էր համարել Համաշխարհային երկրորդ պատերազմում զորուած երեք ու կէս հարիւր հազար հայ զինուունների արեամ զինը, սակայն Հայաստանի իշխանաւորների մտքով անզամ չանցա դրանց դիմաց պահանջենու Գերմանիայի գրադարաններում գտնուու հայերէն հարիւրատր ձեռագրերը, որոնց մի մասը, ամկակած, այնտեղ հասել է Առաջին համաշխարհային պատերազմից յետոյ, ամենազն հաւանականութեամբ՝ եղելու իրագործած թուրքերի գերմանացի հրամանագիշների ձեռքով:

նադրուղը կանգնած են երկխորան եւ եռագմբէթ (մէջտեղինը գնդաձեւ է, կողքերինը՝ սրագագաթ) եկեղեցում, առաջինը ուղիղ դիրքով, ձախ ձեռքը դրած երկրորդի գլխին, որ խոնարհուած է: Եկեղեցու կենտրոնական գմբէթը նկարի մէջտեղից մի փոքր ձախ՝ շրջախոնարհուած է սմ վեր է ելնում, իսկ նրա գագաթը պատկում է 1,7x0,9 չափսի ոճաւոր ոսկի խաչ: Նակից 1 սմ վեր է ելնում, իսկ նրա գագաթը պատկում է 1,7x0,9 չափսի ոճաւոր ոսկի խաչ:

Նկարն ունի կանոնաւոր եւ վարժ երկաթագրով երկու մակագրութիւն. ա. շրջանակի վերին եղրագծից վեր, ոսկեգոյնի մօտեցող՝ բաց դարչնագոյն թանաքով (ըստ երեւոյթին՝ ըմբողջ ձեռագրի գրչութիւնը եւ թանաքն այսպիսին է եղել)՝ «ՏԻՐԱՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ» ամբողջ ձեռագրի գրչութիւնը եւ թանաքն այսպիսին է եղել»՝ «ՏԻՐԱՑՈՒ ԵՊԻՍԿՈՊՈՍ»

(երկու բառի միջեւ շրջանակից դուրս ելնող կենտրոնական գմբէթն է), բ. շրջանակի մէջ՝ նրա եւ խորանի սիւնի միջեւ, ձեռնադրողի նկարից ձախ, նրա գլխից մի փոքր վեր սկսելով, դէպի ցած շարունակուելով եւ արմունկին չհասած աւարտուելով, կապոյտ հէնքի վրայ սպիտակ ներկով գրուած է. «ՏՇՐ Ս/ՏԵՓ/ԱՆ/ՈՍ / ԾԱ/ՌԱ / ՔՇԻ»¹¹ (տե՛ս նկ. 2):

Մեր առաջին խոդիրը, բնականաբար, պատառիկի մօտաւոր թուագրումն էր, իսկ դրա համար նկարագարուումը եւ նկարն աւելի լաւ ուղենիշ են, քան՝ գրչութիւնը եւ գրատեսակը (առանձնապէս՝ մեր ունեցած սոսկ երկու բառի), ուստի մանրանկարչութեան բազմափորձ հետազօտողներ իրինա Դրամբեանի եւ էմմա Կորիսմազեանի հետ մանրազնին նայելով եւ խորհրդակցելով, յանգեցինք ԺԲ-ԺԳ. դարերի սահմանագծին՝ առաջինի երկրորդ կէս կամ երկրորդի սկիզբ: Թէ՝ «Տիրացու եպիսկոպոս» բառերի գրչութիւնը եւ թէ՝ մանրանկարի ոճական յատկանիշները թելադրում էին նախընտրելի համարել ԺԲ. դարի երկրորդ կէսը, ուստի անմիջապէս համեմատեցինք Գրիգոր Նարեկացու Մատեանի ներսէս Լամբրոնացու պատուէրով գրուած՝ պահպանուած հնագոյն օրինակի (ՄՄ ՀՇ՝ 1173 թ.) մանրանկարների հետ եւ համոզուեցինք, որ արտայայտչաեղանակների ու ոճի մերձաւրութիւններ կան: Փորձելով մօտաւոր ենթադրել գրչութիւն-ծաղկման միջավայրը, աւելի հաւանական համարեցինք Կիլիկեան Հայաստանում ծաղկուած լինելը, քան՝ բուն Հայաստանում: Առաջին Հայեացքից թուաց, թէ վերեւի մակագրութիւնը վերաբերում է ձեռնադրողին, իսկ շրջանակի մէջի երկրորդը՝ ձեռնադրուողին, բայց սրան հակասում էր այն հանգամանքը, որ վերջինս գրուած է ձեռնադրողի նկարին կպած, մինչ՝ ձեռնադրուողից աջ եղած տեղն աւելի մեծ՝ ընդարձակ է:

Այս ելակէտերն ունենալով, բնականաբար, պէտք է փնտրէինք միաժամանակ երկու անունը. երկուսն էլ յանգեցրին ԺԲ. դարի երկրորդ կէսին ապրած մի անձի, որով աներկրայ դարձաւ, որ ձեռնադրուողը մնացել է անանուն, իսկ մակագրութիւնները վերաբերում են մի՛միայն ձեռնադրող եպիսկոպոսին, որին Հ. Աճառեանն իր յայտնի բառարանում բնորոշել է այսպէս: «103. Ստեփանանոս Տիրացու վարդապետ, առաջնորդ Վարագայ կամ Խաչի վանքի, արքեպիսկոպոս Վանտոսպի, մեծահամբաւ սրբութեամբ եւ իմաստութեամբ. ծերութեան ժամանակ Գրիգոր Զ. Ապիկրատ («1194-1203 թ.») կաթողիկոսը թախանձանօք հրակից նրան իր մօտ՝ Հռոմեայ: Ներկայ եղաւ Լեւոն Բ.ի թագադրութեան հանդէսին «1199 թ. [թունուարի 6ին]»¹²:

Այդուհետեւ, ի վերջոյ, յաջողուեց գտնել պատառիկիս մայր ձեռագրի թերի եւ «ամ-


¹¹ Մեր ձեռագրերում առկա աւանդոյթին նետենեղով՝ զոյց շեշտը գործածում ենք համառուման՝ պատիհ աշամի փոխարէա:


¹² Հ. Աճառեան, Հայոց անձամբունեղի բառարան, Խո. Դ., Երևան, 1948, էջ 616 (այսուհետեւ՝ ԱՃԲԹ. Դ.):



14. 1

ԺԻՌՈՒ-
ԵԳԵԱԿՈՂՈՑ





14. 3



բոլղական» երկու նկարագրութիւն. Օննիկ (Յովհաննէս) Բարաղամեանն իր «Յուցակ ձեռագրաց Վասպուրականի» անտիպ գործի մէջ այն նկարագրել է որպէս Կտուց անապատի Հմ¹³: Առաջին թերի նկարագրութեան տարրերուող բնորոշումներն ու տուեալներն ու դղանկիւն [] փակագծերի մէջ առած եւ երկրորդին հիւսելով, ներկայացնում ենք այն.

«49. Տետր կամ Տետրատ ձեռնադրութեան կիսասարկաւագի. 27, 19 եւ 2.¹⁴ վրայի սեկը ցեցերէ ծակծկուած եւ պատուած, մագաղաթեայ եւ ոսկիով, լաջուարդով եւ այլ ընտիր-ընտիր [եւ ակնապարար] երանդօք եւ արուեստով, [արուեստին բովանդակ նրբութեամբն ու ճարտարութեամբ] պատկերազարդ եւ ծաղկած՝ [մարդոց, թոչնոց եւ այլ նկարներով], իւրաքանչիւր էջը 18 տող, եւ աղօթքներն ու սկիզբը եւ վերջը գրուած կրկին, յիշատակարանները գրուած 1 հար. մեսրոպեան ոսկի տառերով¹⁵, իսկ սաղմուները վառ կարմրադեղով՝ տողերուն միջեւ մեսրոպեան փոքր տառերով: [Ամրողը] տետրին թերթերը 30 [29] հատ [գրուած է միայն մէկ երեսէն եւ նորէն մէկ հար. մեծ ոսկի եւ մեսրոպ. տառերով եւ ոմանց միջոցները կարմրադեղով եւ փոքր տառերով]. ափսո՞ս, սակայն, որ վերջին դարերու մէջ անխոհեմ գրիչ մը Խորհրդատեսրի պարունակութիւնը [երկուատեք] գրած է¹⁶ բոլոր տողերուն միջեւ, սեւալդեղով եւ բոլորագրով: Առջին երեսը [1 հար. ոսկիով եւ մեսրոպ. տառերով] գրուած յիշատակարանն է. «Այս տետրս Տ. Ստեփանոսի եւ Տ. Ալրապէլին է, որք գնի պատահիք, յիշեց՛ք բարի յիշատակաւ զի՞ս զնուաստ Ալրապէլ հովանէ անարժան եպիսկոպաւս Սիմեոնց, եւ զհաւրեղբայրն իմ զՏ. Ստեփանոս»:

Այս յիշատակարանէն վերջ նկարուած առաջին պատկերին մէջ կը տեսնուի 23 հար.¹⁷ Այս յիշատակարան մը՝ շքեղազարդ զգեստաւորեալ եկեղեցական զգեստուք, ոտքի վրայ կանգնած եւ շապիկ մը հագած կիսասարկաւագացու մը՝ անոր առջեւ ծնրաչոք եւ ձեռնամած, իսկ պատկերին շրջանակէն դուրս՝ եպիսկոպոսի գլխին վերեւը գրուած. «Տիրացու եպիսկոպոսն է». Վերջին ոտանաւոր յիշատակարանն է. «Այս տետրատ ցանկալի՝ / աս-

¹³ ՄՄ ձեռ. ՀՊ 6333, 10ր (էջ 20) և 66ա (էջ 131). առաջին նկարագրութեան մէջ ձեռագրի անունը նախ գրել է «Խորհրդատեսր», ապա՝ ջնջել ու վերնար գրել ճիշտը՝ «Տետր ձեռնադրութեան կիսասարկաւագի»: Կան անու փոխադրդ յուրմանը. առաջին մաս լսում, վերից վար՝ «Սոյց 49 թիւը տե՛ս 131րդ երեսը» (10ր), երկրորդի սկզբում՝ «Փոխադրած 20րդ երեսէ, տեղույն անձկութեան առթիւ» (66ա), վերջինս մաս լսում այլ ձեռքով, սեւ թաճարով, վերից վար գրուած է. «Ծնորժնակուած է»:

¹⁴ Ձեռագրերի չափսը նշանակում է «Երկալի/ութիւն», լայն/ութիւն, թանձր/ութիւն» կարգով և «հար/իւրորդ»՝ սանտիմետր միասորով. պահպանուած և Մաշտոցեան Մատենադարան եւած ձեռագրերի ներկայ չափերը, փոքր շեղումներով, համապատասխանում են Բարաղամեանի նշանական միջամատը՝ Հայոց 5560ինը նշել է «25, 17 և 8» (6333, 1ա), իսկ ձեռագրացուցակում (Բ, Երեսա, 1970, էջ 133) 24,5x16 է: Մեր խնդրոյ առարկայ ձեռագրի՝ Բարաղամեանի նշանակած 27x19 և պատառիկ ունեցած 19,5x15,7 չափերի տարրերութիւնը ցոյց է տալիս, որ վերջինս անխնդօրէն եղանակուել է, յատկապէս՝ ստորին լուսանցի մասից:

¹⁵ Պատառիկի տառերի բարձրութիւնը 0,5 սմ է:

¹⁶ Այս տեղեկութեամբ պարզում է այն նանեղուկը, թէ ի՞նչու պէտք է Խորհրդատեսրի մէջ նկարուէր ձեռադրութեամ տեսարաւան, որ անդի յարիր է Մաշտոցի բնոյի ձեռագրերին. մինչ այդ նայեցինք Խորհրդատեսրի մի քանի տասնեակ նկարազարդ ձեռագրեր եւ, ձեռնադրութեան պատկեր չգտնելով հանդերձ, արձանագրում ենք, որ ծիսական այս ծողովածուի պատկերագրութեան ուսումնասիրումը մեր գեղարդունսի պատմութեան նետագուման կարեւոր խնդրմանը մէկն է:

¹⁷ Լուսապակը չհաջուած՝ նախկոպոսի նկարի բարձրութիւնը պատառիկի մէջ 10,5 սմ է, լուսապակով՝ 11 սմ:

տուածային գանձովն լի, / գրեալ ձեռամբ անարժանի, / որ Յովհաննէս անուն կոչի, / ի յանապատը Բարսըդի, / որ ի լերինս Տարոսի, / մերձ առ դրան սուրբ Սիովնի, / ընդ հովանեաւ Աստուածածնի, / վարդապետին Տիրացոյի՝ / Հզաւը եւ մեծ գիտնականի, / եպիսկոպոս Ստեփանոսի՝ / Հաղորդ փառացն Պետրոսի. / Տէր վայելի տացէ բարի՝ / երկար ակոպոս Ստեփանոսի՝ / Հաղորդ փառացն Պետրոսի. / Տէր վայելի տացէ բարի՝ / երկար ամառք ժամանակի, / եւ բարիոք կեալ կենդանի՝ / ողորմութեամբըն Քրիստոսի, / մինչեւ ի կէտ իւր պայմանի, / որ Աստուծոյ միայն յայտնի. / եւ յապագայն դասեսցի, / ընդ որդիս կէտ իւր պայմանի, / ընդ որս եւ ինձ մասն եղիցի՝ / անդատապարտ կալ առաջի / ասլուոյ առագաստի, / ընդ որս եւ ինձ մասն եղիցի՝ / անդատապարտ կալ առաջի / տուածային նորա բեմին»: Թէեւ անթուական՝ բայց Օրպէլեանց ծաղկելուն ժամանակն է Փրկչի 1300 կամ 1301 թուականն ըստ պատմութեան»¹⁸:

Պատմողականի համեմատ Հարցակարգային նկարագրութիւնն աւելի ցայտուն, արտայայտիչ եւ ընկալելի է, ուստի պատառիկիս մայր ձեռագիր արտաքին յատկանիշները պատկերենք ներկայումս ընդունուած կարգով եւ ձեւաւորումով (Հետագայ շարադրանքի մէջ պարզաբանելու ենք այստեղ արուած որոշակիացումները).

Կոտուց անապատի Հ^ր 49 [231]

[ԿԱՆՈՆ] ԶԵՌՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԿԻՍԱՍԱՐԿԱՒԱԳԻ, (ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ՝ Հետագայ յաւելում)

ԲԱՐՄԱՐԻ ԱՆԱՊԱՏ (ՏԱՒՐՈՍԻ ԼԵՌՆԵՐ)

[Հուրջ 1170 թ.]

ԳՐԻՉ եւ ԾԱՂԿՈ՞Ղ Յովշաննէս: ՍՏԱ.ՑՈՂ՝ Ստեփանոս եպիսկոպոս, մականուն Տիրացու:

ԹԵՐԹ՝ 30 կամ 29. սկզբնապէս չգրուած՝ բոլորի մէկ երեսը: ՆԻՒԹ՝ մագաղաթ: ՄԵ-ԾՈՒԹԻՒՆ՝ 27x19x2: ԳՐՈՒԹԻՒԻՆ՝ [միասի՞ւն]: ԳԻՒ՞ երկաթագիր. մեծ [բոլորգիծ], ոսկիով (աղօթքները եւ յիշատակարանները) եւ միջին [թեք կամ ուղղագիծ], կարմրով (սաղմուները): ՏՈՂ՝ 18: ԿԱ.ԶՄ՝ կաշի (միջուկը եւ աստառը՝ անյայտ):

ՄԱՆՐԱՆԿԱՐՁՈՒԹԻՒՆ. ՆԿԱՐ 2թ՝ ձեռնադրութիւն կիսասարկաւագի. մարդոց, թռչնոց եւ այլ նկարներ: Խորան՝ անյայտ: Կիսախորան՝ անյայտ: Լուսանցազարդ՝ անյայտ: Զարդագիր՝ անյայտ: Գոյներ՝ կարմիր, կանաչ, կապոյտ, ոսկի, սեւ, սպիտակ: ԾԱՂԿՈՒՄԸ ոսկիով, լաջուարդով եւ այլ ընտիր-ընտիր [եւ ակնապարար] երանգօք եւ արուեստով՝ [արուեստին բովանդակ նորութեամբն ու ճարտարութեամբ]:

ԹԻՇԱՏԱԿԱՐԱՆ՝ վերջում (թ. 29 կամ 30). ՀԵՏԱԳԱՑ՝ 1ա (1302 թ.):

ՎԻՃԱԿ կազմի կաշին ցեցակեր եւ պատուած:

Փնտրատքի սկզբում մեր ուղենիշը ԺԲ. դ. երկրորդ կէսը եւ նրա հիման վրայ ընտրուած՝ Աճառեանի 10Յրդ Ստեփանոսն էր, ուստի, երեւի վրիպմամբ, յաջորդ դարի մէջ, առաւել եւմ՝ նրա վերջում նոյն անունը չէինք փնտրել. միայն Բարաղամեանի նկարագրութեամբ իմանալով ձեռագրի գրչութեան «Բարսոյի անապատ» անունը, նրանով յանգեցինք նկատելու, որ, նոյն Բարաղամեանից առնելով եւ նրա «1300 կամ 1301 թուականն ըստ պատմութեան» արտայայտութեան վրայ յենուելով, վաստակաշատ ձեռագրագիտ Արտաշէս Մաթեւսեանն այս ձեռագրի թէ՛ գրչութեան եւ թէ՛ Յովշաննէս Օրբէլի Հետագայ յի-

¹⁸ ԱՄՄ ձեռ. Հ^ր 6333, 66ա (էջ 131) և 10թ (էջ 20. Վերջինիս մէջ գրչութեան յիշատակարամը չկայ):

շատակարանները տպագրել է 1300 թ. ներքոյ¹⁹: Այս հրատարակութեան մէջ մեր խնդրին վերաբերող վրիփումներ կան, ուստի, թուացեալ շեղումով, պարտաւոր ենք նախ պարզելու դրանք, ապա՝ դառնալու մեր հարցերին:

Օրբէլին յիշատակարանը ծանօթագրել է. «Հետագայ ստացողի յիշատակագրութիւնն է այս՝ գրուած շուրջ 1300ական թուականներին» (ԺԳ, 692, ձ. 2): Սակայն, ըստ ամենայնի, սա գրուել է Օրբէլի Հօրեղբայր Ստեփանոս Օրբէլեան պատմագրի կենդանութեան ժամանակ: Վերջինս Սիւնեաց մետրոպոլիտ էր 1286 թ. մինչեւ մահ՝ 1303 թ.: Իր կենդանութեան օրոք նրա Հօրեղբայր Լիպարիտ Օրբէլեանի որդի թովհաննէս Օրբէլը օծուել է աթոռակից-յաջորդ եւ որպէս մետրոպոլիտ յիշատակւում է 1302-1323 թթ.²⁰, ուրեմն՝ Օրբէլի անթուական յիշատակարանի գրութեան ամենահաւանական տարին ո՛չ թէ 1300ը, այլ՝ 1302ն է. ապա՝ ենթադրելի է, որ Ստեփանոսը կամ Օրբէլը ձեռագիրը կամ «տետր»ը ստացել են ամենայն հաւանականութեամբ իրենցից մէկի՝ եպիսկոպոսի աստիճան ստանալու համար կիլիկիա այցելած ժամանակ:

Արա Հետ միաժամանակ, նոյն հատորում տպագրել է աւանդաբար Մաշտոցի ինքնագրից օրինակուած համարուող՝ 1069 թ. ՄՄ Հմ^ր 10434 Աւետարանի հետագայ յաւելում 288-91 թերթերի վրայ գրուած (290ա-1ը՝ չգրուած)՝ կրկին հետագայ եւ անթուական երեք յիշատակագրութիւն (ԺԳ, 33-4, Հմ^ր 11), որոնցից առաջինը (288ա) մուգ սեւ թանաքով, վարժ եւ անկանոն (համարել է «կանոնաւոր»), այսինքն՝ գրագէտ, բայց ո՛չ վարպետ կամ արհեստ բանեցնող գրչի ձեռքի բոլորգրով է (անհմուտ աչքին կարող է թուալ ԺԴ-ԺԵ. դարերի) եւ որի մէջ ոմն Տիրացու ասում է, թէ այդ Աւետարանն իր «սեփական»ն է, միւս երկուսը (ըստ էութեան՝ չափածոյ ակզեռով եւ արձակ աւարտով մի յիշատակարան են), բաց դարչնագոյն թանաքով, վարժ եւ վարպետ եւ նոյն ձեռքի կանոնաւոր մանր երկաթագրով են, չափածոյ մասում (288բ-9ա) նո՞յն Տիրացուն դիմում է Աւետարանին՝ «Կամիս լինել զիս մաքրութեամբ քեզ սպասաւոր», ապա ինքնափնովման ընթացքում ասում է՝ «Այդ տառապեալս Տիրացու՝ յոյժ յանցաւոր, / Վերջին եւ տրուպ ամենեցունց՝ որ զիտաւոր», արձակ մասում (289բ) կրկին դիմում է Աւետարանին՝ «Ընդ բազումս անցեր... հասեր եւ իմս անարժանութեան, եւ ես տամ զքեզ եկեղեցւոյ քում սրբոյ»: Սա վերջանում է նոյն ձեռքով, մի փոքր աւելի մուգ թանաքով գրուած երկու տողով. «Յիշեսջիք ի Քրիստոս զողմաս»:

Բոլորգիր առաջին յիշատակարանը Մաթեւոսեանը համարել է գրուած ձեռագրի տէր Տիրացուի ձեռքով, իսկ միւս երկուսի (իրականում՝ մէկի) համար ծանօթագրել է՝ «Կողման, հաւանաբար, յիշատակարանի գրիչն է, որ գրել է Տիրացուի պատուէրով» (ԺԳ, դ., 34, ձ.): Այս ենթադրութիւնները հաւանական եւ ընդունելի են, սակայն կայ նաև հիմնովին անճիշտ նոյնացում՝ «Տիրացուին նոյնացնում ենք Ստեփանոս Տիրացու գիտնականի հետ, որը Վասպուրականի Սուրբ Խաչ վանքի առաջնորդ էր եւ մահացել է 1202 թ.: Յիշա-

¹⁹ Տե՛ս Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դ., Կազմեց Ա. Ս. Մարենոսեան, Երեւան, 1984, էջ 860, Հմ^ր 692 (ձ. 1՝ վերարտադրել է ձեռագրի Ակարագրական որոշ տարրեր. հատորը ԺԳ, համառումամբ և էջների ու յիշատակարանների համարներով այսուհետեւ լինու ենք շարադրանքի մէջ):

²⁰ Տե՛ս Լեռնա Խաչիկեան, Սիւնեաց Օրբէլեանների Բուրբէլեան ճիղը. Բամբեր Մատենադարանի, հու. 9, Երեւան, 1969, էջ 190, 198:

տակարանը որպէս վերջին հնարաւոր ժամկէտ, զնում ենք այդ թուականի տակ» (ԺԳ., 33, ծ.): Այս սխալ նոյնացման խախուռ հիմքերից առաջինն այն է, որ ձեռագիրը 1069ին գրուել է Վասպուրականում եւ ԺԳ. գ. սկզբին ղեռեւս կարող էր լինել այնտեղ, իսկ երկ-ըրուց վերօբերեալ քաղուածքում մեր ընդգծած «զիտնաւոր» բառն է: Նախ՝ ԺԳ. դարի ամբողջ ընթացքում Տիրացու անձնանունը բաւական յաճախաղէպ էր (տե՛ս ԺԳ., անուանացանկ՝ էջ 979), ապա՝ հետագայ ստացող այս Տիրացուի երկիցս գրուած անուան կողը չկայ «Տիրացու գիտնականի» բուն «Ստեփանոս» անունը եւ նրա՝ եպիսկոպոս լինելու մասին որեւէ խոսք:

Հսա այսմ՝ այս յիշատակարանների թուագրման, աւելին՝ տեղորոշման, լաւագոյն ելակէտ ենք համարում գըչի սակաւաղէպ Կողմա անունը. այսինքն՝ գրեթէ համոզուած ենք, որ 1069 թ. ՄՄ ՀՀ²¹ Աւետարանը ԺԳ. դարի սկզբներին եղել է Խարբերդում կամ նրա շրջակայքում (ասենք՝ Խարբերդի դաշտի Բարձանճ²² գիւղի մօտի նոյնանուն անապատում), ուր միատեղ կային Տիրացու անունով մէկը եւ Կողմա անունով մի գրիչ²³. Կողման 1205 թ. Թորոս երամիշտի համար Խարբերդում, «ընդ հովանեաւ Արքոյ Կարապետին եւ Սուրբ Թակովբայ» գրել է Վենետիկի Միխիթարեանների ՀՀ²⁴ 938/88 Աւետարանը, որի գլխաւոր յիշատակարանում խնդրում է յիշել «Եւս առաւել զհոգեւոր եղբարք իմ՝ զատուածահաճոյ քահանայք զթուաննէս եւ զՏիրացու, որ առաջնորդ եւ աւգնական են դործոյս» (ԺԳ., 54, ՀՀ²⁵ 20)՝:

Վերադառնանք մեր խնդիրներին. Ստեփանոս Տիրացուի համար գրուած՝ Կտուց անապատի ՀՀ²⁶ 49 [231] կորսուած ձեռագիրը եւ նրա պահպանուած մասունք՝ ՄՄ ՀՀ²⁷ 2098 պատառիկը Տալրոսի Բարսղի կամ Բարսեղեանց անապատում գրուած՝ առայժմ յայտնի միակ²⁸ ձեռագիրն է, ուստի պարտաւոր ենք նախ կարելոյն չափ ճշգրտել նրա թուագրումը, ապա հնարաւոր համառօտոթեամբ վերարձարծել այդ անապատին եւ Ստեփանոս Տիրացուին վերաբերող մեզ յայտնի բոլոր տեղեկութիւնները:

ԹՈՒԱԳՐՈՒՄ. Հետագայ շարադրանքի մէջ տեսնելու ենք, որ Ստեփանոս Տիրացուն

²¹ Կամ՝ «Փարչանջ կամ Բեռչանճ, 180 տում (470 հոդին Լուսառչական, 160ը րոդրական և 50ը կաթոլիկ), եկեղեցին Ս. Փրկիչ, որուն աղցաւոր ու ալրիացեան երէցն էր Բատմարաս քահանայ Գասպարեան - ծած 18 Օգոստափ 1875ին... Ասմատապ.. կաթոլիկ հայոց հովիտն էր Հ. Պողոս Գազամնանա - ծած 1879ին Արքակիր... Ասմատակը՝ տե՛ս Թէոդիկ, Գողգոթա հայ հոգեսորականութեան և իր հուտին աղէտայի 1915 տարին, Խմբագրեց Արքա Գալապնան, նի Եռոր, 1985, էջ 228: Գիտը «1915ին ումէր 3500 բանկիչ, որից 2000ը հայ, մաացած՝ թուրքեր... Գիտում գործում էր մէկ երկսեռ դարպոց (բացուած 1845 թ.), ումէր երկու եկեղեցին» եւն. տե՛ս Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախչեան, Յ. Խ. Բարսեղեան, Հայաստանի և յարակից շրջամաների տեղամունքների բառարան, Չորս հատորով, Խո. 1, Ա-Դ, Երեւան, 1986, էջ 634 (միւս հատորները՝ Երեւան, 1986, 1988, 1998. տիտղոսաթերթին 1991 թ. կրող Յորդ եւ իրականութ տպագրութ է 1998 թ., պատմանուն՝ ՏԲ):

²² Առգմա գրի մասին տե՛ս Ցուցակ հայերէն ձեռագիրաց ի Կեսարիա, Զմիտրիա և ի շրջակայս Աղքին, Նկարագրեց Տրդատ եպիսկոպոս Պալեան, Կազմեց՝ Գէորգ Տէր-Վարդանեան, Երեւան. 2002, էջ 50, ձեռ. ՀՀ²⁹ 17, ձ.:

²³ Նոյն Կողման 1219 թ. Բարքանճի անապատութ գրել է ՄՄ 7734 Աւետարանը (ԺԳ., 115-6, ՀՀ³⁰ 74):

²⁴ Հմլու. Répertoire des monastères Arméniens, Par Michel Thierry, Brepols - Turnhout, 1993, p. 56, N° 297^a - [Kahraman Maraş Yenicekale. Saygili] (Probablement le memque Şür anapat n° 296). ամկակած Ծոլոր անապատի մետ Աղյացուը միջու չէ, աւելի՛ վերարտարել է Ա. Մաթևոսեանի՝ 1300ին պատեղ ձեռագիր գրուած ինձուն վերաբերող սխալութեր:

1198 թ. առաջ «ոչ գարձեալ ընդդէմ կամ պատճառեալ զծերութիւն, այլ որպէս վայել էր իւրում զուարթ և զուարճածաղիկ ալեացմ», Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի հրաւէրով Վասպուրականից գնացել է Հոռոմլայ: Իր կենդանութեան ժամանակ նորընծայ Սարգիս «բարի եւ իմաստուն պատճառեակ» եպիսկոպոսին ընտրել եւ նշանակել է «իւր փոխան եւ տեսուչ անապատի Սուլքը Խաչի ստացուածոց»:

Այսպիսի քայլ կարող էր անել մոտալուտ վախճանի զգացում ունեցող ծեր մարդը. ըստ այսմ՝ կարող ենք անել շատ հաւանական ենթադրութիւն, թէ մահուան ժամանակ՝ 1202 թ., սովորական միջին 70 տարեկանից անց էր, ասենք՝ շուրջ 80ամեայ²⁵: Մանրանկարում Ստեփանոս Տիրացուի մազերը դեռեւս լրիւ թուլս են, ճերմակ չկայ, ուստի յիշատակագրի՝ նրա մազերին տուած բնորոշումը, առանձնապէս՝ «գուարճածաղիկ» բառը (Հայերէնի Հիմնական բառարաններում չգտանք) կարծում ենք պէտք է հասկանալ՝ շատ չնօրացած եւ մասամբ ճերմակ՝ սեւաներմակ: Տարբեր մարդկանց տեսողական տպաւորութեամբ առաջնորդուելով, յանդեցինք այն եղրակացութեան, որ դիմանկարում պատկերուած է 50ին մօտ կամ մի փոքր անց տարիքի մարդ. ուրեմն, կրկին շատ հաւանական ենթադրութեամբ, ձեռագիրը գրուել եւ ծաղկուել է կեանքի 80ամեակին վախճանուած Ստեփանոսի 50ամեայ տարիքում 1170ի շուրջ (գուցէ եւ մի քանի տարի առաջ կամ յետոյ), որ նշանակում է, թէ Ստեփանոս Տիրացուի ծննդեան թուականը պէտք է դնել 1120 թուականի շուրջ, իսկ կեանքը՝ 1122-1202 թթ. միջեւ:

ԴԻՄԱՆԿԱՐԻ ՎԱՒԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ. ըստ մեր եւ մեր խորհրդակիցների տպաւորութեան՝ պատկերուած է որոշակի դիմագծեր եւ դէմքի որոշակի արտայայտութիւն ունեցող իրական մարդ: Ամենայն հաւանականութեամբ՝ Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսը որպէս «բնորդ» պէտք է կանգնած լինի իր համար գրուող ձեռագրի մէջ իրեն պատկերողի դիմաց²⁶: Էմմա Կորխմազեանը մեր ուշադրութիւնը հրաւիրեց այն փաստի վրայ, որ ձեռնադրութեան մեր նկարի եւ երուսաղէմի Ս. Յակոբեանց Հմբ 1796 կրկին անթուական, աւելին՝ գրչութեան վայրն անյայտ ձեռագրի նկարազարդման՝ դէմքերի, հանդերձանքի պատկերման ձեւի եւ ոճի ակնյայտ նմանութիւններ կան, որոնք առաւել ցայտուն են վերջինիս «Ընծայում-օրհնութիւն» («Զօն») պատկերի հետ համեմատելիս: Վերջինիս մէջ ձեռագրի ստացող Մատթէոս կրօնաւորը կանգնած է գրեթէ մեր նկարի ձեռնադրուղի դիրքով (միայն թէ՝ նկարի ձախ կողմում՝)՝ խոնարհուած, եւ Աւետարանը մատուցում է գահաւորակաթոռին նստած՝ խաչանիշ լուսապակով Քրիստոսին, որ Աջով օրհնում է նրան (նկ. 3):

²⁵ Ստեփանոս Տիրացուին այս տարիքը տալով՝ ամենայն չենք չափազանցում. Գրիգոր Ապիրատը 1194ի վերջերի՛ 72ամեայ, կաթողիկոս է օծուել և 1203ի Մարտին մահացել է 81ամեա հասակում. տե՛ս Ազգապատում. Հայ ողջափառ եկեղեցոյ անցքերը սկիզբէն մինչեւ մեր օրերը՝ յարակից ազգային պարագաներով պատուած. Գրեց Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան. Նախկին պատորիադք. Ա. հատոր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2001, § 1039' էջ 1767, § 1071' էջ 1820 (այսուհետեւ՝ Ազգապատում, Ա.):

²⁶ Միշնադարեան հակական դիմանկարային արուեստի հնատագուման որոշակի քայլեր արուած են (իման. Հայկական մամրամկարչութիւն. Իմանմկարներ, Կազմեց, առաջարան և ծանօթագրութիւնները գրեց Աստողիկ Գէորգեան, Երեւան, 1982), սակայն նկարի եւ նկարուած ամենատի ժամանակակցութեան, նկարողի վարպետութեան եւ նկարուած ամենատի դէմքի ճշգրիտ-վաերական պատկերման հարցերը դեռևս խիստ կարու են մամրազմին քննութեամ:

գարեգին Յովսէփի այս «ձեռագրի ծագումը մինչեւ ԺԲ. դարի կէսերը ընդունելի» է համարել, իսկ նկարազարդումը գնահատել է որպէս «կիլիկեան արուեստի վաղագոյն Մշանի գործ, բայց Արեւելեան Հայաստանին բնորոշիչ գծերով» եւ բիւզանդական արուեստի տարրերի ազդեցութեան սկսուող արտայայտութեամբ²⁷: «Զօնի խմբանկարի» գ. Յովսէփի անկարազարդութիւն-գնահատման մի հասուածը հաւասարաչափ վերաբերելի է նաեւ մեր պատառիկի նկարին. «Ստացող Մատթէոսը գլուխը թեքած մատուցանում է իր Աւետարանը Թիմուսին, իսկ Սա Աջով օրհնում է նուիրատուկին: Մատթէոսի կեցուածքը, գլւխի թեքումը, դէմքի արտայայտութիւնը, բարեձեւ մօրուքը, Աւետարանի չնորհալի մատուցումը, հագուստը իր ծալքաւորումներով, բոլորը իրար լրացնող ներդաշնակութիւն եւ համաշխատութիւն են նրա կերպարանաւորութեան (Figure), որ արուեստագէտի ունակութեան ապացոյցն է որպէս ինքնուրոյն ստեղծագործութիւն՝ եւ ո՛չ սովորական աւանդական ընդօրինակութիւն (Schablonne):»²⁸:

Ն. եպս. Պողարեան այս ձեռագիրը հարցականով թուագրել է «ԺԲ. դար?»²⁹, իսկ Բ. Նարկիսի եւ իր գործակիցների արժեքաւոր աշխատութեան «Թէոդորոսի Աւետարանը եւ Հռոմէլլայի ու Սկեւուայի դպրոցները»³⁰ գլուխն ամբողջովին նուիրուած է այս Աւետարանին. այսուղ, հիմնուելով Հռոմէլլայում եւ Սկեւուայում 1166-1197 թթ. գուած 10 ձեռագրի՝ U. Տէր-Ներսիսեանի կազմած ցանկի³¹ վրայ, Թէոդորոսի նկարները եւ նրանց ձեւաւորման տարրերն աւելի մօա են համարում Սկեւուայում 1173 թ. գրուած եւ ծաղկուած ՄՄ Հ^ւ 1568 Նարեկի «Փոքր» նկարներին, քան՝ նոյն տեղում 1193 թ. գրուած եւ նկարուած՝ Վենետիկի Միխիթարեանց Հ^ւ 1635/125 Աւետարանի³² «մեծ» պատկերներին, ըստ որի եւ ձեռագիրը թուագրում են 1170ականներով կամ ԺԲ. դ. երկրորդ կէսով³³:

27 Գարեգին Յովսէփի անկարազարդութիւնները հայ արուեստի պատմութեան, Բնու. Բ., Երևան, 1987, էջ 228-32, մասնաւորապէս՝ էջ 229-30:

28 Նոյն տեղում, էջ 232:

29 Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, Բ. Զ. Կազմեց Նորայր եպս. Պողարեան. Երուսաղէմ, տպ. Ա. Յակոբեանց, 1972, էջ 146-50. պատեղ կայ Մատթէոս անտարանչի, Մարկոսի սկզբնաթերթի և Զօնի պատկերների սեւ-սպիտակ վերարտադրութիւնը: Ձեռագրի 224ր էքի յիշատակազորութեան հիման վրայ Պողարեանը ստացող Մատթէոս կրօմատրին համարել է Անա գրի, դրամով ուղղեղով Գ. Յովսէփի անկարազարդութիւնը 1170 ականներով կամ ԺԲ. դ. երկրորդ կէսով³³:

30 Armenian Art Treasures of Jerusalem, Edited by Bezalel Narkiss, In collaboration with Michael E. Stone, Historical survey by Avedis K. Sanjian, Managing editor: Alexander Peli, Massada Press, Jerusalem, 1979, p. 41-5. էջ 43-5 և 57-60. Վերարտադրութիւն Դուկասի սկզբնաթերթ (1142ց), Ըստայում (288ր), Յովսէփի անկարազարդութիւնը: Ձեռագրի 224ր էքի յիշատակազորութեան հիման վրայ Պողարեանը ստացող Մատթէոս կրօմատրին համարել է Անա գրի, դրամով ուղղեղով Գ. Յովսէփի անկարազարդութիւնը 1170 ականներով կամ ԺԲ. դ. երկրորդ կէսով³⁴:

31 Armenian Manuscripts in The Freer Gallery of art (with 100 plates), By Sirarpie Der Nersessian, Washington, 1963, p. 10-17.

32 Նկարազորութիւնը տե՛ս Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մաստենադարանի Միխիթարեանց ի Վենետիկ, Բ. Ա. Յօրիմեց Հ. Բ. Վ. Սարգիսեան՝ Միխիթարեան ուսմտէն, Վենետիկ - Սուլը Ղազար, Ծննդա - 1914, էջ 549-60. Ակարազարդումը տե՛ս Sirarpie Der Nersessian, Manuscrits arméniens illustrés des XII^o, XIII^o et XIV^o siècles de la Bibliothèque des Pères Mnkhitharistes de Venise, Paris, E. de Boccard, 1937, pl. XVI-XXX.

33 Տե՛ս B. Narkiss, p. 43, 48. Այս անյն ձեռագրերի նորագոյն քանութիւնը և մկարազարդութեանը՝ հիմականում սեւ-սպիտակ եղանակով հրապարակումը տե՛ս Miniature Painting in the Armenian Kingdom of Cilicia, from

ինքնին յայտնի է, որ միջնադարեան մեր գրչութեան օջախները միշտ, առանձնապէս՝ խաղաղ ժամանակաշրջաններում, սերու կապեր են ունեցել անդամ ժամանակի համար բաւական հեռաւոր տարածութիւնների վրայ՝ բուն Հայաստանի եւ Կիլիկիայի վանքերի միջեւ եղել է աշխոյժ երթեւեկ, որը բնականարար, առաւել յաճախադէպ է եղել միմեանց աւելի մօտ գտնուող կիլիկեան կենտրոնների միջեւ (արա ցայտուն դրսեւորումը տեսնելու ենք նաև մեր Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսի գործած վայրերի օրինակով): Այստեղ առաւել ուշագրաւն այն փաստն է, որ իրարից լիովին անկալի նկատուել է երուսաղէմի Հմբ 1796 Աւետարանի եւ մեր Հմբ 2098 պատառիկի ծաղկման մերձաւորութիւնը 1173ի Սկեւույի (Ներսէս Լամբրոնացու) Նարեկի նկարազարդման հետ: Սա նշանակում է, որ անթուական առաջին երկուսի 1170ականներով մօտաւոր թուագրումն իրաւացի է: Երուսաղէմի Աւետարանի գրչութեան վայրն անյայտ է, նարեկինը եւ մեր պատառիկինը՝ յայտնի (Սկեւուա եւ Բարսղի անապատ): առաջինի եւ երրորդի մէջ եղած «Ընծայում» եւ «Զեռնագրութիւն» նկարներն աւելի շատ ընդհանուր տարրեր ունեն, քան՝ Աւետարանի եւ նարեկի նկարազարդումներն ընդհանրապէս: Այսուհանդերձ, չենք պնդում, թէ Աւետարանը կարող է գրուած լինել պատառիկի գրչութեան վայր Բարսղի անապատում: Իր ստեղծման ժամանակաշրջանի եւ միջավայրի համեմատ՝ այդպիսի գրչութիւն եւ նկարազարդում կարող էր արուել Կիլիկեան որեւէ վանքում:

ԾԱՂԿՈՂԸ. գրչութեան անթուական յիշատակարանում ծաղկողի անունը չկայ, սակայն, ըստ Օ. Բարաղամեանի նկարագրութեան՝ ձեռագրի թէ՛ գրչութիւնը եւ թէ՛ ծաղկումն արուած են «արուեստին բովանդակ նրբութեամբն ու ճարտարութեամբ». ծայրէծայր ճոխ գրուած եւ նոյն կերպ նկարազարդուած ձեռագրի մէջ ծաղկողի անուան յիշատակուած չլինելն առաւել քան հաւանական է դարձնում այն ենթագրութիւնը, թէ նա նոյն ինքը գրիչն է, մեր դէպքում՝ Յովկաննէսը: Ըստ այսմ եւ մեր պատառիկով հայկական գեղանկարչութեան պատմութեան մէջ, իր ապրած տեղով եւ ժամանակով հանդերձ Սեւ լեռան Բարսղի անապատ, շուրջ 1170 թ., յայտնի է դառնում անունը եւս մի բարձրարուեստ ծաղկողի՝ ՅՈՎՀԱՆՆէՍ, որի նկարածին նոյնպէս կարող է վերաբերուել Գ. Յովսէփիեանի միւս գնահատականը. «Պատկերի ամբողջութիւնը համարում ենք համաչափ եւ գեղարուեստական՝ մանրանկարչական իմաստով, առանց հեռանկարի հասկացողութեան, որով այս թէոդորոսը պէտք է համարել Կիլիկեան նախնական շրջանի լաւագոյն արուեստագէտներից մէկը»³⁴:

ԳՐՉՈՒԹԵԱՆ ՎԱՅՐ Բարսղի կամ Բարսեղեանց անապատի անուան ստուգաբնութեան հարցում մեծանուն Ալիշանը բաւական զգոյշ է եղել. «Բարսեղեանց մենաստանն կամ անապատ՝ թուի մի ի գլխաւոր վանորէից, յանուն մեծ հայրապետին թէ այլոյ՝ ոչ գիտեմ»³⁵. սակայն, նոյն Բարսղի անապատը «Կիլիկիայում, Սեւ լեռներում, Ճկեր գաւա-

to Twelfth to the Fourteenth Century, Sirarpie Der Nersessian, jointly prepared for publication with Silvia Agemian, with an Introduction by Annemarie Weyl Carr, Dumbarton Oaks Research Library and Collection, Washington D. C., 1993, Volume I, p. 1-36 ("The Twelfth Century: Drazark, Hromkla and Skevra"), Volume II, III. 5-6, 14-5, 21-4, 28-33, 54-65.

³⁴ Գ. Յովսէփիեան, Եջ. աշխ. էջ 232:

³⁵ Միտուան. Համազրութիւն հայկական Կիլիկիոյ և Լեռն մեծագործ, Հաւաքեսակ ի Հ. Դեսմդենայ վ. Մ. Ալի-

ոռւմ» տեղադրող նորօրեայ մի Հրատարակութիւն ունի աւելի վստահ մեկնաբանութիւն՝ «Անունը կապուած է Բարսեղ կաթողիկոսի անուան Հետ» (ՏԲ, Ա., էջ 635): Թէեւ Կիլիկիա տեղափոխուած Հայութեան ազգային-եկեղեցական կեանքի կանոնաւորման ուղղութեամբ Բարսեղ Ա. Անեցու (1105-1113, աթոռակից՝ 1081ից) ձեռնարկած քայլերը հանրայայտ են³⁶, սակայն աւելի հաւանական է, որ միաբանութիւնն առաջնորդուելիս լինէր Ս. Բարսեղ Կեսարացու վանական կանոնադրութեամբ, որով եւ ստացած լինէր իր «Բարսղ» կամ «Բասեղեանց» անունը:

Այս վանքին վերաբերող առաջին հաղորդման հեղինակը Մատթէոս Ուռհայեցին է. «Իսկ ի թուականութեան Հայոց ՇԿԲ (1114)... եղեւ զի ի Սեաւ լեառն, անուանի յանապատն՝ որ կոչի Բարսեղեանց, էին ժողովեալ եկեղեցօրհնէքն սրբասնեալ կրօնաւորք եւ վարդապետք Հայոց, եւ կային ի պաշտօնն Աստուծոյ. անկաւ եկեղեցին ի վերայ նոցա, եւ երեսուն կրօնաւոր եւ երկու վարդապետ կատարեցան ի ներքոյ նորա, որ կան մինչեւ ցայսօր»³⁷:

Միայն այս տեղեկութիւնը նկատելով, նորերս կարծել են, թէ «1114 թ. տեղի ունեցած երկրաշարժից վանքը հիմնովին կործանուել է եւ այլեւս չի վերականգնուել» (ՏԲ, Ա., էջ 635): Սակայն, թէ՝ նորայայտ պատառիկի գոյութիւնը (ցոյց է տալիս, որ Բարսղի անապատում կեանքը շարուակուել է նաեւ նոյն ժմ. դարի երկրորդ կէսին) եւ թէ՝ նախապէս յայտնի տեղեկութիւնները վկայում են, որ վանքը վերաշինուել է եւ հետագայում գործել, այսինքն՝ Ուռհայեցու «կան մինչեւ ցայսօր» խօսքով պէտք էր հասկանալ մինչեւ իր Ժամանակագրութիւնը գրելու հանրայայտ վերջին տարին՝ 1136 թ.:

Այսպէս. յայտնապէս Ուռհայեցուց առնելով, նրա տեղեկութիւնը երկրորդել է նաեւ ժէ. դարի սկզբի ժամանակագիր Ցաղկը Սանցին. «Ի ՇԿԲ (1113)... ի Սեաւ լեառն՝ անուանի յանապատն Բարսեղեանց էին ժողովեալ յեկեղեցին կրօնաւորք եւ վարդապետք Հայոց ի պաշտօնն. եւ անկաւ յեկեղեցին, եւ Լ (30) կրօնաւոր եւ Բ (2) վարդապետ կատարեցան ի ներքեւն...»³⁸:

շամ՝ յուստէն Միխիարայ, Վեմետիկ - Ս. Ղազար, 1885, էջ 407 (պատուետե՛ Սիսուամ):

³⁶ Տե՛ս Ազգապատում, Ա. § 904-15, էջ 1536-60. Խմ. էջ 1561-76:

³⁷ Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, Բ. տպագրութիւն, Վաղարշապտ, 1898, էջ 330, 333. Խմ. Միքանայ Սպարապետի Տարեգրը, Ի Վեմետիկ - Ս. Ղազար, 1956, էջ 143: Վաճրին վերաբերող տեղեկութիւնների մի մասը տե՛ս Սիսուամ, էջ 407. Անեւ՝ Կիլիկիայի վաճրեղը, Գրեց Դկտր. Հ. Հ. Պոկեամ Միխիթ. ովստէն, Վիեննա, 1957, էջ 133-4: Հ. Տաճառ Եարտղմեան, Քանութի Կարմիր վաճրը, Վեմետիկ - Ս. Ղազար, 1976. գիրը թէեւ ումի «Սեւ լեռան վաճրեղը» խորագորդ զրուս (էջ 25-9), բաց պատեղ Բարտի վաճրին վերաբերող Զոր փաստը չկամ:

³⁸ Վեմետիկի Միխիարեանց ծեռ. ՀՊ 1318, 41ա: Այս աղրիս Դ. Ալիշամին մասշելի է դարձել «Սիսուամ»ի տպագրութեան աւարտի օրերին: Նրա մասին զրել է. «Անամուն մնայ... նեղինակ, այլ միայն վկայէ զանձնէլ լինել երեց Երեխտորան եկեղեցոյ Սույ՝ ի կէս ժէ: դարու... Ժամանակագիր Կիլիկիոյ կոչեցի զա ի Ցաւելուածին» (Սիսուամ, էջ ԺԱ.): և «Ժամանակագիր Կիլիկիոյ կամ «Ժամանակագիր մեր» բարոշումներով Զոր հաղորդումների վկամակուսումներ ու գործածութիւն ումի գրի բուն շարադրանիր միայն վերջին էջերում (517, 520, 521), իսկ 19 մնածիրի էջ բունող «Ցաւելուած և ուղագրութիւնը» Խատուածի առնուազ 90 տոկոսն պատուած ապահովութեամբ հաղորդումների վերաբերութիւնն է: Այս գործի մնացակի Ցաղկը Սանցի անունը մենք ենք պարզել (միմասորելու ենք առանձին յոդուածով), միաժամանակ՝ Զոր երկի բագրիը պատրաստում ենք հրասարակութեամբ:

Աւելին, նոյն Յակոբ Ստեղին ունի նաեւ առայժմ անյայտ աղբիւրից քաղած յաւելեալ երկրորդ հաղորդումը. «Եւ եղեւ ի ԶԺԸ (1269) ամին... շարժ ի Սեւ լեառն եւ ի գղեակն Սարվանդոյ քարն, եւ Դեղնքարն, եւ ի Համուսն եւ ի վանորայքն. եւ սպան զբազում՝ մեծամեծք եւ փոքրունք, եւ փլոյց զբազում շինուածն: Եւ փլաւ Բարսեղենց յանապատին եկեղեցին ի ժամ օծմանն, որ նոր կու օծէին, եւ մնաց ի ներքեւն Բ. (2) վարդապետ, Բ. (2) եպիսկոպոսք եւ Մ. (50) կրօնաւորք»³⁹:

Այդուհետեւ յայտնի է, որ Եփիպատոսի մամլուկների արշաւանքներից հալածուելով, Կիլիկեան Տաւրոս կամ Սեւ լեռների Բարսղի վանքի միաբանութիւնը 1307 թ. տեղափոխուել է եւ, սկզբնապէս հաստատուելով ձենովայում, Խտալիայում հիմնադրել է «յայտնոյն ծովու» (citra mare) կենցաղավարող «Հայ Բարսեղեանների» բազմածիւղ եւ բազմամարդ կաթոլիկ միաբանութիւնը, որին միաւորուել են նաեւ Խտալիայի «Հայոց տները» եւ որը, 1356 թ. պատական պաշտօնական ճանաչում ստանալուց⁴⁰ եւ Ս. Օգոստինոսի վանական կանոնադրութիւնն ընդունելուց յետոյ, գոյատեւել է մինչեւ 1650 թ.⁴¹ (հիմնականում ծագումով կիլիկեցի այս վանականները միշտ աշխոյժ եւ սերտ կապ են ունեցել իրենց հայրենիքի հետ):

ՍՏԵՓԱՆՈՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻՐԱՑՈՒ. Յայտնի է, որ Ցովկաննու Հանգստի («Էր ընդ եղբարս» աղօթքի) Ներսէս Լամբրոնացու (1153-1198) մեկնութիւնը գրուել է «ի խնդրոյ Ստեփանոսի վարդապետի Յակովոցոյ, ի Ներսէս աշակերտէ իւր եւ Հոգեւոր որդեկէ»⁴². «Ներսէս ինքովնքը Ստեփանոս Յակոբի վարդապետին «Հոգեւոր որդին» կը կոչէ, որ Ներսէս Շնորհալոյ «դրան սարկաւագն էր. կը յիշուի 1173-1175 տարիներուն... Առանց տարակուսի նոյն են այս երկու Ստեփանոսները, ի մանկութիւնէ սնած եւ աճած Հռոմեայի մէջ» (Ակին. 21-2): Այս նոյնացումն առնուած է Գարեգին Կաթ. Ցովսէփեանից, որ իրեն յայտնի նիւթի հիման վրայ իր կաղմած ժողովածուի անուանացանկի մէջ գրել է. «Ստեփանոս վ. Յակոբեցի, օգնող գրչի, «դրան սարկաւագ Ներսէսի հայրապետի, 1173 թ., 1179 թ., 1193 թ., Հռոմեայում, նաեւ Ակեւուայո՞ւմ»⁴³:

³⁹ Վենետիկի Սիսիթարեանց ձեռ. ՀՊ 1318, 96ա. «Եկեղեցին... նոր կու օծէին» խօսքից կարող է թուալ, որ գործ ունենք նախորդ հաղորդման ժամանակագրորեն սխալ տեղ դրուած եւ աղաւաղ տարրերակի հետ, սակայն զոհուածմերի տարրեր քանակը՝ «Բ. (2) վարդապետ, Բ. (2) եպիսկոպոս և Մ. (50) կրօնաւորք», փարատում է այս կասկածը եւ ենթադրել տալիս, որ խօսքը գուցէ գոյութիւն ունեցող մայր Եկեղեցու կողքին կառուցուած օժանակ մի այլ Եկեղեցու օժնան մասին է:

⁴⁰ *Sic u Pontificia Commisio ad redigendum codicem iuris canonici orientalis. Fontes. Series III, Volumen X. Acta Innocentii PP. VI (1352-1362). E regestis Vaticanis, alisque sonitibus collegit Alosius L. Tätsu, Romae, 1951, p. 140-4:*

⁴¹ *Sic u Marc-Antoine van den Oudenrijn, Les Constitutions des Frères Arméniens de Saint Basile en Italia-Orientalia Christiana Analecta 126, Roma, 1940, էջ 7-10, հմմտ. Վ. Ինքիզիտան, Հայ Բարսեղեանց միաբանութիւնն յիտալիայ և անոնց սահմանադրութիւնը՝ ըստ Մ. Ա. Վ. Դ. Ուտեմրիյանի. «Հանդէս ամսօրեալ», 1948, էջ 426-34:*

⁴² *Sic u Հ. Ներսէս վ. Ակիմեան, Ներսէս Լամբրոնացի. արքեպիսկոպոս Տարտոնի, Կենաքը և գրական վաստակները, համեմեծ ազգարանութեամբ Պահպատմեաց և Լամբրոնի Հեթմեանց, Ներսէս Լամբրոնացոյ ծննդեան 800երորդ տարեդարձի առթի, Վիեննա, 1956, էջ 155 (այսուհետեւ շարադրանքի մէջ յեկու ներ «Ակիմ» համառումամբ և էջամանարով):*

⁴³ Գարեգին Ա. կաթողիկոս [Ցովսէփեան], Յիշատակարանք ձեռագրաց. Հատոր Ա. (Ե. դարից մինչեւ

Ակինեանը հիմնուել է իր իսկ՝ Լաբրոնացու մի հաղորդման վրայ եւ սրանց հետ նոյն նացրել նաեւ Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսին (Ակին. 22, հմմտ. նաեւ 157-8). Լեւոն թագաւորին ուղղուած իր հոչակաւոր նամակում, ի հակակշիռ իր կարգաւորումները մերժող Զորացետցի վարդապետների, Լամբրոնացին իր հայ եւ լատին կողմանակիցների երկար թուարկման մէջ յիշել է. «Երեւելի արքն Ստեփանոս Տիրացուն՝ ուսուցիչն մեր...»⁴⁴: Այս հաղորդումն ի մտի չունենալով հանդերձ, Ղ. Ալիշանն արել է շատ սրամիստ մի կուահում. «Ո՞վ է այս Ստեփանոս վարդապետն՝ որոյ աշակերտ եւ որդեակ կոչէ զինքն ներսէս, չեմ գիտեր. Վանայ կողմանց անուանի եպիսկոպոսն, որ եկաւ Լեւոն թագաւորի օծութեան ժամանակ եւ Լամբրոնացու ծանօթացաւ. մի՞թէ նա էր»⁴⁵:

Սակայն, մինչ այդ, Մկրտիչ վ. Աւգերեանի կազմած Համբուռնացու զարքը սչչ կար աննկատ մնացած հետեւեալը. Շնորհալին «պահեաց զնա առ ժամանակ մի ի հայրապետանոցի... եւ ապա հրամանաւ նորա գնաց ի վան Սեաւ լերին. եւ եկաց ընդ վարժապետութեամբ Ստեփանոսի գիտնական վրադապետի՝ Տիրացու կոչեցելոյ»⁴⁶. Այսպիսով, որպէս Համբուռնացու ուսուցիչ յայտնի Ստեփանոսն ունի երեք բնորոշում-մականուն. ա. պէս Համբուռնացու ուսուցիչ յայտնի Ստեփանոսն ունի երեք բնորոշում-մականուն. ա. թակորցի, բ. Շնորհալու (կաթողիկոսարանի) «դրան սարկաւագ», գ. «Տիրացու»: Ակինեան ակորցի, բ. Շնորհալու (կաթողիկոսարանի) «դրան սարկաւագ», գ. «Տիրացու»:

Ազգից եւեթ ասելով, որ մեր ունեցած նորայայտ տեղեկութիւնները եւս հաստատում ու լրացնում են Յովսէփի անի եւ Ակինեանի տեսակէտների իրաւացիութիւնը, նախ փորձենք բացատրել այս անուանումների տրամաբանական կապը: Ստեփանոսի «ՅԱԿՈՎ-ՔԵՑԻ» կոչումն անպայման նշանակում է ծագում՝ կարծում ենք վանքի անունից, ուր նա սկսել է կրօնաւորի իր գործունէութիւնը: Այդ ժամանակների ու միջավայրի այդպիսի անունով եւ աշխոյժ գործունէութիւն ունեցող վանքը, մեր կարծիքով, Լեռնային Կիլիկիայում, Վաճկայ բերդից Հիւսիս-արևելք գտնուող Հաճըն (Հարդան) բնակավայրի «արեւմտեան կողմը, համանուն լերան ստորոտը... հաստ ու ամուր պարիսպներով շրջա-

1250 թ.), Աղթիլիաս, 1951, սին 1228 (այսուհետև շարադրանքի մէջ՝ «Ցիշ-ը» բամակօտմամբ):

44 Թուղարք առ քիչստոսազօր իշխողն մեր իմբակալութեամբ Լեռն, ի Առասա Ներսիսէ [Լ.ամբրոնացոյ], որ ի Տարտու պրոյ և կենացոյ պաշտօնեալ. Գրիգորի Կաթողիկոսի Տղա կոչեցելոյ նամակամի. Տ/Եառն/ա Ներսիսէ Լամբրոնացոյ Տարտու եպիհոկոպոսի Աստեմաբանութիւն և բուդր և ճառը, ի Վենետիկ, ի Ս. Ղազար, 1865. է-329 (ամբողջ նամակն՝ է-207-48. պատմենուն՝ Թուղարք առ Լեռն):

45 Հպատակում. Պատմիքը և պատմութիմը Հայոց Յօրինեալ և Բատաքեալ ի Հ. Ղետնեալ կ. Մ. Ալիշամ... Վենետիկ, ի վաճառ Ս. Ղազարու, ՌՅՇԱ - 1901, թ. Բ., էջ 430' յոդ. 311, ծ. 2 (պատմետել՝ Հյատմ. Բ.). անշուշտ, միամբ տեղեկութիմների պակասի պատճառով՝ Ալիշամը չփոխէր, որ Լամբրոնացին Ստեփանոսին ծառոյ էր դեռևս իր բանակացման 1168 թուականից և դեռևս Հոռվալյանից: Գ. Յովսէփիեամը (Յիշ-ք, 577ձ.) ծառոյ էր Ալիշամի առ Խանակծին, առումանեռն, որեւէ Վերաբրդումը չի արտապատել:

46 Մկրտիչ Վ. Աւգերեան, Լիակատար Վարք և վկանաբանութիւն սրբոց..., Բ. Ե., Վենետիկ, 1813, էջ 346-7.
Լամբրոնացոյ լիշտակի օրը՝ «Օգոստ. 9 կամ Փետր. 19 և կամ Յուլիսի 17», Թրա Վարքի իր աղրիմները՝ «Սա-
մուչէ ծերութիւն ժամանակակից, Գրիգոր Ակելացի և այլք»: Աւգերեանց բերութ քաղուածքը գրեթէ քառացի
տեսն նաև Մ. Զամշեան, Պատմութիւն Հայոց, Բո. Գ., Վենետիկ, 1786, էջ 90-1:

«տուած» Ս. Յակոբ վանքն էր, որ հիմնուել է ԺԱ. դարում եւ գործել մինչեւ 1915 թ.⁴⁷: Գուցէ զուտ տրամաբանութեան վրայ հիմնուած ենթադրութիւն է, բայց նաեւ հնարապ ամենահաւառականն է: «Սարկաւագ» նշանակում է ընդհանրապէս «սպասաւոր եկեղեցոյ, որ անընդմիջապէս սպաս տանի քահանայի կամ եպիսկոպոսի, մանաւանդ ի սուրբ Ստարագին» (ՆՀԲ, Բ., 700դ), ուստի Ստեփանոսի «ԴՐԱՆ ՍԱՐԿԱՒԱԳ» պաշտօնը, որն նենալով Հանդերձ, նա «վարդապետ», «աստուածաբանական վարդապետ» կամ «արժմական վարդապետ» էր, կարող է նշանակել՝ կաթողիկոսարանի ծխա-պաշտամունքան բոլոր ինդիքների պատասխանատու (երեւի սարկաւագութիւն էր անում նաեւ կաթողուսի մատուցած պատարագների ժամանակ):

Միաժամանակ, քանի որ այսօր իսկ որեւէ եկեղեցու քահանայի սպասաւորող սարկապին խօսակցական լեզուում գրեթէ միշտ կոչում են «տիրացու» («սարկաւագ»՝ խիստ պուադէս), ապա՝ գրաւոր խօսքում «ղրան սարկաւագ» կոչուած Ստեփանոս վարդապետն կաթողիկոսարանի առօրեայում ամենայն հաւառականութեամբ անուանել են «Տիրաց Ստեփանոս վարդապետ», եւ այս «Տիրացու» մականուն-պատուանունը գործածուել է նրա եպիսկոպոսացումից յետոյ, որովհետեւ նա ոչ թէ սովորական, այլ՝ կենդանուան օրօք իսկ սրբագրուած Շնորհալի կաթողիկոսի «ՏԻՐԱՑՈՒՆ»⁴⁸ էր: Ըստ այսմայլ է Յակովլեցուն Աճառեանի տուած բնորոշումը՝ «տիրացու եւ ապա վարդապետ» նձին, Դ. 617), որովհետեւ նա վարդապետ եւ Տիրացու է եղել միաժամանակ:

Այժմ կարգով ներկայացնենք եւ մեկնաբանենք յայտնի բոլոր հաղորդումները, որոնք նեւ որոշ չափով պատկերում են ժամանակի այս նշանաւոր գործիչի կեանքի գործունէութեան դրուագները: Հետագայ անհարկի կրկնութիւններից խուսափելու համար նախ թուարկենք Լամբրոնացու կեանքի սկզբնական շրջանի հիմնական թուականներ: 16ամեայ՝ 1168ին Հռոմէլլայում քահանայացել է, որոշ ժամանակ մնացել այնտեղ, ասև՝ գնացել Սեւ լեռան վանքերը, այնտեղից 1172ին վերադարձել Լամբրոն, Շնորհալու հից (1173 թ. Օգոստոս) եւ Գրիգոր Տղայի օծումից (Սեպտեմբեր) յետոյ, «Հաւանօրէն 74ի սկզբները» գնացել է Հռոմէլլայ, ուր «գիտուն վարդապետներու... քով... քննեալ նղեկացաւ Հին եւ Նոր կտակարանաց իմաստից», 1175ին յիշատակուել է «տիեզերական որդապետ» բնորոշումով, նոյն ժամանակ եպիսկոպոս է օծուել «իբրեւ արքեպիսկոպոս սրոնի թեմի» (Ակին. 11-22): Իրօք, 1175ին Լամբրոնացին գրել է, որ Կիւրեղ Աղեք-նղրացու Պարապմանց գիրքն ինքը կարդացել է՝ երբ «ի վարժումն իմաստից» էր (Թիշ-459), այսինքն՝ այդ ժամանակ նրա ուսումնառութիւնն աւարտուած էր, իսկ 1176ին ուղէն էր «վարժեալ եւ յարբուն հասեալ» (Թիշ-ք, 406):

Ցովհաննու Հանգստի վերն ակնարկուած մեկնութեան սկսուածքը հետեւեալն է. «Գիրը յոյ պատուականութեանդ միանդամ եւ երկիցս, հայր սուրբ, եհաս առ իս՝ փութացու-

⁴⁷ Մամրամասները տե՛ս Կիլիկիայի վաճքերը, Գրեց Դկտոր. Հ. Հ. Ռոկեան՝ Մխիթար. ուխտէն, Վիեննա, 1957, 260-1: Հմտն. ՏԲ, Գ. Էջ 314:

⁴⁸ Թիշենք նաև, որ «տիրացու» հասարակ բառը, ինչպէս եւ «վահական»ը եւ աղլն, այդ եւ հետագ դարերում գործածում էր որպէս յասուկ՝ անձնանուն, առանց եւս՝ վերջին դարերում ստացած ծաղրա-նեղամ իմաստը չուներ:

ցանող առ ի խնդիր քննութեան...» (Ակին. 155)⁴⁹, ապա՝ «Որ ամենայնիւ եւ ճշմարտափել եւ իմաստաէր, մինչ զի ոչ քոյովդ բաւականացեալ, այլ եւ զմեզ ձգեցեր հաւանութեամբս ի յանդուութիւն, ո՞վ հայր պատուական Ստեփանոս, զորոյ ի գլուխ ած չնորչ Աստուծոյ՝ զխնդրելիս, ի ձեռն տառապեալս գործարանի, ի փառս իւր եւ ի վայելս քում հաւատոց եւ ճշմարիտ առ աստուածաբանս սիրոյ... փութացեալ միայն հնազանդութեամբ որդիկանս հպատակութեամբ՝ պատճառ նիւթեալ իմաստնոյդ՝ առ եւ սորին իմաստութիւն բարձրանալ»:

Ալշանը կարծում է, որ սա «հարկ է մի յառաջին երկանց վաղահաս մտացն լինել, լոկ ներսէս կոչէ զինքն եւ գորովանօք բարբառի առ դաստիարակն եւ բազում պատուալոր եւ թուփ գոլ մի ի նշանաւոր վարդապետաց ժամանակին վանահարց» (Ախուան, 89) Հստ այսմ, թէեւ թ. Յովսէկիեանը բնագրային-յիշատակարանման այս հատուածը դրել թովկաննու Յայտնութեան թարգմանութեան 1179 թ. յիշատակարանից յետոյ (Յիշ-481-2), բայց Հանգստի Լամբրոնացու մեկնութեան գրուելու ժամանակը պէտք է մօտ լինրա ուսումնառութեան վերջերին՝ 1172ին:

Գրիգոր եպիսկոպոս (ապագայ կաթողիկոս) Ապիրատն իր հորեղբայր ներսէս Շնորհալուց նուէր է ստացել Սեբաստիայում 1066 թ. գրուած մի Աւետարան, որ «Ես՝ տէր Գրիգորիս, ծառա ծառակից Քրիստոսի, եղբակրորդի տեառն ներսիսի կաթողիկոսի հայոց եւ որպէս Զաւրավարի, ետու վերըստին նոր⁵⁰/ոգել արտաքուստ կուսէ զաստուածաին Աւետարան գեղեցիկ մետաքսէիւք եւ ակամ[բ]ք պատուականաւք, ընդելուզեալ ի մարգարտոյ մեծագնոյ, ի ձեռն աստուածաբանական վարդապետի Ստեփանոսի՝ դրան սարկաւագտեառն իմում, որ եւ վասն անմոլար ճանաչեղոյ կոչի սա Յակորցի⁵¹, ի յիշատակ ինձ ենողաց իմոց, նախ եւ առաջին հոգեւոր տեառն իմոյ ներսիսի կաթողիկոսի, որ եւ զոյիսկ զԱւետարանս շնորհեաց ինձ ի զբաւսանս եւ ի խրախճանութիւնս հոգեւոր, այսու զուարձանալ եւ մի՛ պատրանաւք անցաւոր կենցաղոյս» (Յիշ-ք, 575-6)⁵²:

Թէեւ յիշատակարանն անթուական է, սակայն ակնյայտ է, որ Ապիրատն Աւետարան ստացել է Շնորհալու կաթողիկոսութեան տարիներին, 1166-73 թթ. ընթացքում՝ «երբ նա կաթողիկոս էր, աւելի հաւանական վերջին տարիներին» (Յիշ-ք 576), կազմը Ստեփանու

⁴⁹ Հմտ. նաև Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատունադարամին Մխիթարեաց ի Վենետիկ, Բատոր Պատմագիր Հայոց - Կամոնագիրը, Գրիգոր Նարեկացի - Ներսէս Շնորհայի, Ներսէս Լամբրոնացի - Աղօրագիրը, Յօրիմանց Հ. Սահմակ վ. Ծեմենմեամ՝ Մխիթարեան ուխտէան, Վենետիկի - U. Ղազար, 1996, էջ 930, 998, 1000 Նոյն կազմողի՝ Բու. Ձ. (Պատմագիր Հայոց - Կամոնագիրը, Գրիգոր Նարեկացի - Ներսէս Շնորհայի, Աղօրագիրը, Վենետիկ, 1996) պատմեստել շարադրամի մէջ ու փակագծեալ յեղու Ամբ «Վահ Ձ» ձևով. յիշատակելու ենք նաև Բու. Ձ. (Տօնապատմա - Ժողովածոյ, Մատենագիրը Հայոց. Վենետիկ, 1996)

⁵⁰ Մինչեւ այստեղ ուղղագիծ երկաթագիր, շարունակութիւնը՝ բոլորդիր:

⁵¹ Ապագայ կաթողիկոսն ըստ երեսութիւն պլաքամել է. «Յակորցի» է, որովհետեւ, Յակոր անունով առաջապնդի նման, Քրիստոսի հաւատի և ուստումքի մէջ անմոլար-անշեն է:

⁵² ՄՄ ձև. ՀՊ 311, 217ր. ձեռագրիս բոլոր յիշատակարամները, մամրամասն ծանօթութիւններով, տնօթիւք, 247-50, 411-2, 575-80, 581-6. Արածն քննութիւնը տնօթ Գարեգին Յովսէկիեան, Նախանաց յիշատակամները և ուսումնասիրութիւններ նայ արուեստի պատմութեան, Բու. Ա., Երևան, 1983, էջ 64-81. Բմմտ. Հ. Ն. Ակիմեան, Սկնուայի Աւետարամը 1197 թուակամէն Լվովի հայ արքեպիսկոպոսարամի գրադարանին մէկնանա, 1930, էջ 22:

արեցու ձեռքով զարդարել է տուել զբանից յետոյ եւ 1194 թ. առաջ՝ երբ այն նույրել սմբռոնի եւ Պապեռոնի տէր Բակուրան իշխանին (Յիշ-ք, 581-6). Յովսէփեանը յիշարանը գրել է 1193 թ. ներքոյ, բայց գրեթէ վստահ ենք, որ նորոգում-վերակազմումը նեղել է Ծնորհալու կաթողիկոսութեան տարիներին. ըստ շարադրանքի՝ Ստեփանոսը ան սարկաւագ» է, ոչ թէ՝ «էր», ինչպէս կայ յաջորդ յիշատակութեան մէջ:

Քրիգոր գրիշը 1173 թ. Ծնորհալու օրօք սկսելով եւ նրա մահից (Օգոստոս) յետոյ առելով, նոյն Ծնորհալու սպասաւոր Կոստանդին քահանայի համար Սկեւոայում գրել Աւետարան, ուր խնդրել է յիշել. «զայնոսիկ, որք աւժանդակ եղեն գրչիս ի գրութիւն ա, մանաւանդ զարդիւնական վարդապետն զՍտեփիաննու, որ դրամ սարկաւագն էր ասիսի հայրապետի» (Յիշ-ք, 446)⁵³: Նկատենք՝ այս ժամանակ Լամբրոնացին եւս ռայալում էր, ուր նո՞յն Գրիգոր Միհճեցին նրա համար գրել եւ ծաղկել է ՄՄ Հ^Ա 1568 րայայս Նարեկը:

Թ. Յովսէփեանը կարծում է, որ այս Ստեփանոսը «ամենայն հաւանականութեամբ... է ներսէս Ծնորհալու կողմից՝ իր կեանքի վերջին տարիներին՝ միութեան խնդրի առգէսի Արեւելք ուղարկուած Ստեփանոս վարդապետի հետ» (Յիշ-ք, 577)⁵⁴: Այս ենթառութեանն աւելացնենք նաեւ մերը. շատ հաւանական է, որ այս նոյն Ստեփանոսի ուուէրով գրուած լինի Ծնորհալու հետեւեալ գործը. «Մեկնութիւն Դաւթի Փիլիսոփա-որ ի կատարումն նորին տառի, որ վասն փորձանաց իմաստութեան, ասացեալ տեառն սիսի Հայոց կաթողիկոսի, ի խնդրոյ ումեմն Ստեփիաննոսի սիրողի իմաստութեամ»⁵⁵: Երկայացուած բոլոր հաղորդումներից իմանում ենք, որ Ստեփանոս Տիրացուն մկայում գործել է Ծնորհալու կաթողիկոսութեան տարիներին, որի վերջին՝ 1173 ականին եղել է նաեւ Սկեւոայում. այս նոյն տարում նա յիշատակուում է որպէս «վարդեա», բայց չի բացառուում, որ դրանով շեշտառում է նրա «գիտնական-վարդապետ» լի- այսինքն՝ մինչ այդ կարող էր դեռեւս Ծնորհալու ձեռքով եպիսկոպոս ձեռնադրուած լ, որից յետոյ միայն հնարաւոր էին մեր դիմանկարի վրայ առկայ մակադրութիւննե- Մեր պատառիկի մայր ձեռագրի անթուական յիշատակարանն այս ամէնին աւելաց- է, որ նոյն տարիներին նա եղել է Սեւ լեռների Բարսղի անապատում, ուր նրա ա- նորդ եղած լինելը կարելի է համարել հաւանական ենթադրութիւն եւ աւելացնել յա- է հաւանական վարկածը. կաթողիկոսարանի «դրան սարկաւագ» է եղել Ծնորհալու ողիկոսութեան ո՛չ ամբողջ ընթացքում, հանրայայտ դիտնականի եւ իմաստասէրի իր բաւով 1168ի շուրջ երեւի արդէն Բարսղի անապատի վանահայր էր, ուստի եւ Ծնոր- հն Լամբրոնացուն Հոռմկայից այնտեղ է ուղարկել՝ հէնց Ստեփանոս Տիրացուից ու- առնելու համար:

³ Հմնտ. Հայերէն ձեռագրերի յիշատակարամներ. Ե-ԺԲ. դդ., Աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթեոսեանի, ամ, 1988, էջ 213, Հ^Ա 231 (պստմետուն Ե-ԺԲ. դդ.). ձեռագրը եղաղ է Տիգրամակերտի Ս. Կիրակոս եկեղե- յիշատակարամը գրառել Է՝ Թորոս աղքար, Հայաստանի ճամրորդ, Գրեց Գարեգին վ. Արուանձտեանց, ամ Բ. կ. Պոլիս, 1884, էջ 442-4:

⁴ Այս դեսպանագնացութեան մասին տե՛ս Ազգապատում, Ա, § 985՝ էջ 1679, § 996՝ էջ 1697, § 997՝ էջ 1698:

⁵ Վեճետիկի Մսիթարեանց ձեռ. Հ^Ա 728/1299 (ԺԲ. դ.), 75p-84p. տե՛ս Վեճետիկ, Է., էջ 507-8:

* * *

Այդուհետեւ ուղիղ քառորդ դար Ստեփանոս Տիրացուի մասին որեւէ աղբիւրում յիշատակութիւն չկայ. նրա մասին վերստին, այս անգամ՝ բաւական մանրամասն պատմում է 1198 թ. գրուած մի ձեռագրի՝ ժամանակ անց գրուած ընդարձակ պատմում է 1198 թ. գրուած մի ձեռագրի՝ ժամանակ անց գրուած ընդարձակ յիշատակարանը. Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի հրաւէրով Վասպուրականից Հռոմկլայ գնացած «Տիրացու Ստեփանոս անունով ծերունի քահանայ»ի պատուէրով իր հետ նոյն գնացած «Տիրացու Ստեփանոս անունով ծերունի քահանայ»ի պատուէրով իր հետ նոյն գնացած «Յակոբ անունով ճարտար ընդօրինակողը» գրել է Կաթողիկեայ թղթերի Ներսէս Շնորհալու մեկնութեան մի օրինակ, որ «կը գտնուի Մխիթարեանց մատենադարանն ի Վենետիկ»⁵⁶:

Նախ նկատենք, որ ըստ նորագոյն մի հրատարակութեան⁵⁷ Ներսէս Շնորհալին Կաթողիկեայ թղթերի մեկնութիւն չի հեղինակել, սակայն Մխիթարեանց Վենետիկի մատենադարանում կայ նրա այդ երկի վեց ամբողջական եւ մէկ մասնական, ընդհանուր հաշուով եօթ օրինակ - ա. Հ.⁵⁸ 1462/1063, 1198 թ., թ. Հ.⁵⁹ 656/1065, 1291-1302 թթ. գ. Հ.⁶⁰ 951/1069 1335 թ., դ. Հ.⁶¹ 1381/1087, ԺԶ. դ., ե. Հ.⁶² 1202/1343, 1312 թ., զ. Հ.⁶³ 401/1348, 1720 թ., է Հ.⁶⁴ 1098/1214, ԺԴ. դ. (մասն)՝ ապա՝ Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրերի մէջ թուուցիկ փնտրութեալ պարզել ենք եւս երկուսը⁵⁹:

Տիրացու Ստեփանոս եպիսկոպոսի համար Յակոբի գրածը վերի թուարկման առաջին պահպանուած հնագոյն ձեռագիրն է՝ Հ.⁶⁰ 1462/1063, ուստի նրա նորատիպ նկարագրութիւնից (Վնտկ Զ., 607-14) քաղում ենք մեր խնդրի համար կարեւոր տեղեկութիւնները ըստ հարկի բերելով նաեւ յիշատակարանների նախորդ հրատարակութիւններից⁶⁰ ծանօթութիւնները, իսկ քաղումներից յետոյ աշխատելու ենք պարզաբանել նրանց առթած խնդրները եւ հարցերը: Ձեռագրի արտաքին յատկանիշներն առաջնային կարեւորութիւն ունեն: Մխիթարեան միաբանութիւնն այն «1791էն առաջ ընդունած» է «Տիրապէքիրէն», ունի 25x17,5 չափսի գեղնաւուն, հաստ եւ ամուր թղթի 276 թերթ, 30 պրակ՝ 10ական թերթով (վերջինը՝ 7)⁶¹, գրադաշտը 19x12,5 չափսի, երկսիւն, էջում 23 տող, գիրը՝ «բոլորգիր ընտիր եւ մեծ, նման երկաթագրի. շատ անգամ գիրը կը փոխուի, որովհետեւ այլեւայը»

⁵⁶ [Հ. Գարեգին վ. Զարքիանական, Պատմութիւն հայ Իին դպրութեամ (Ղ-ԾԳ. դար), Բարձրագոյն դպրոցաց համար... Վենետիկ, 1932, էջ 634:]

⁵⁷ Ա. Գրիգ հայերէն մեկնութիւնների մատենագիտութիւն, Պատրաստեցի՛ Եգաիկ եպս. Պետրոսեան, Արմէն Տէր-Ստեփանակեր, Հայաստանի Աստուածածնայի ընկերութիւն, [Երևան], 2002:

⁵⁸ Տե՛ս Վանկ, Զ. 607-14, 619-20, 639-41, 725-6. Վանկ, Է. 628-30, 661-2, 91 (ձեռագրերի կրկնակի համարներից առաջինները գոյրամասնաբերն են, երկրորդները՝ ցոյցակիւղը). գործի խորագիրը և սկզբանատողը (ըստ Հ.⁶² 656/1065ի)՝ «Հասաքումն մեկնութեան երանեցունց թղթոցն կաթողիկէից. Նախադրութիւն թղթունց Յակովար - Աղոյաց Յակոբ էր ըստ մարմնոյ եղալը Տեառն մերոյ...», անցիրելի են նոյն թղթերի՝ Սարգիս Շնորհապետութեան հետո. հմմտ. Ա. Գրիգ հայերէն մեկնութիւնների մատենագիտութիւն, էջ 103:]

⁵⁹ Տե՛ս ՍՄ ձեռ. Հ.⁶³ 1407 (1596 թ.), 1ա-236ա, Հ.⁶⁴ 1373 (ԺԷ. դ.), 1ե-236ա:

⁶⁰ «Ստեփանոս Տիրացու եպիսկոպոս Վանա Ա. Խաչիճ. Խորագրով յիշատակարան առաջին անգամ հրատարակել է Ղ. Վ. Ալիշամը՝ Հյուսու, Բ., 441-3՝ յօդ. 311. պատեհից այն արտասպել են՝ Յիշ-թ, սիւն 609-14, Հ.⁶⁵ 277 և Ե-ԾԲ. դդ., էջ 293-5, Հ.⁶⁶ 294 (Վիրապամբ՝ Մեկնութեան ենթակակը է կոչում Սարգիս Շնորհապութ):

⁶¹ Պրականաշիլը թերի կամ սիսակ է ըստ արձամագրուածի՝ ձեռագիրը պէտք է ունենար 29x10+7-397թերթ, ուրեմն՝ կամ պահանջ պակասում է 297 - 276՝ 21 թերթ, կամ՝ պրականի թերթարամակն անկանոն է:

գրիչներ կ'օգնեն գլխաւոր թակոր գրչին»:

Ունի հին նորոգում, կորառած առաջին թերթի փոխարէն գրուել է նորը, ձեռագիրը չենք տեսել եւ չգիտենք՝ կազմն սկզբնակա՞նն է, թէ՞ հետագայի: Սկզբնատառերը եւ սկզբնատղերը սեւ (ո՞չ կարմիր) թանաքով են (Հնութեան նշանակ). Ծնորհալու մեկնութիւնից բացի ունի նաեւ Ս. Սարգսի Պատմութիւնը, որից առաջ՝ 254ա ունի «Խաչ մը, 16x13,6 մետրութեամբ, հիւսած կանաչ եւ մանիշակագոյն ոլորուն երիզով, գրուած նոյն ոճով հիւսուած վեց աստիճանով պատուանդանի վրայ, խաչին վերեւ կայ կիսախորանի ոճով զարդ մը: Ստորեւ գրուած է «ԶՍտեփանոս վարանեալս խորհ/// յիշողն յիշեալ///»: Նախնական եւ եղական ոճով գծագրութիւն մըն է» (Վնտկ Զ., 607):

Գրչութեան ընթացքում թակոր գրիչը գրել է չորս յիշատակագրութիւն. Թակոր Տեառնեղոր թղթի մեկնութեան վերջում (45ա) «Քրիստոսին խնդրում է՝ «զարդարեա՛ ի շուք շնորհի անմարմնոցն՝ տեսաւորեալ զսուրբ հայրս մեր զՏէր Ստեփանոս» (Վնտկ Զ., 613), Պետրոսի երկրորդ թղթի վերջում (123ա) խնդրում է յիշել «զմեծ գիտնական եւ զվասմափայլ առաջնորդ» Գրիգոր Ապիկրատ կաթողիկոսին, «յորոյ աւրինակէ⁶² գրեցաւ գիրքս այս». իսկ այս «հոգեշահ առաքելական» մատեանի ցանկացողն է «Տէր Ստեփանոս արդիւնաւոր գիտնական, որ եւ Տիրացու յորջործի, եւ ետ գրել ըստ հոգւոյ որդեկի իւրոյ Յակովա, ի վայելումն անձին եւ ի յիշատակ հոգւոյն...» (Վնտկ Զ., 612):

272ա Էջից սկսուող գլխաւոր յիշատակարանի սկզբում թակորը նախ ըստ կարգի Սուրբ Երրորդութեանը փառաբանում է իրեն «մինչեւ ի վերջին գիծս» հասնելու արժանացնելու համար՝ «թէպէտ եւ այլ ձեռամբ գրեալ յայլոց, որ երեւիդ ի սմա, այլ եւ զայն պատճառն ցուցից ձերում կատարեալ իմաստից ընթերցողացդ». եւ փոքր անց բացարում է՝ «Եւ ի շարագրելն իմում անդ՝ գային առ իս այլ ոմանք եւ հոգաբարձու եղեալ առ իս՝ աւգնել կամեցեալ, գրէին եւ նոքա, որպէս եւ երեւիդ» (Վնտկ Զ., 609-10): Մի յիշատակագրութեան մէջ էլ խնդրում է յիշել «Մխիթարյա սիրելի եւ հոգեւոր եղբաւը մերոյ... որ առիթ եղեւ մելանիս, զի այժմ է ըստ կամաց իմոց» (28ա՝ Վնտկ Զ., 614. իրեն օգնական էր տրուել, եւ պատրաստել է թանաքը):

Այս հաղորդումները պարզում են խմբովին կամ տարբեր մարդկանց համագործակցութեամբ ձեռագիր պատրաստելու ո՞չ եղակի, բայց հին եւ շատ ուշադրաւ փաստ-եղանակներ. եւ քանի որ խնդիրը վերաբերում է Հռոմելլայի՝ կաթողիկոսարանի գրչութեան արգեստանոցին, ապա պէտք է միայն ափսոսալ, որ նկարագրութեան մէջ մանրամասնուած չէ՝ քանի՛ այլ ձեռքի գիր կայ ձեռագրի մէջ, ամբողջական պղակնե՞ր են գրուած այլոց ձեռքով, թէ՞ միայն էջեր⁶³:

Իր պատուիրատուին բնորոշում է՝ «զպարծանս բնաւին մանկանց նոր Սիովնի եւ զծա-

⁶² Անհամական չէ, որ սա եթէ գործի մեղմակ Ներսէս Օնորիալու իմքնագիր չէր, ապա գոմէ գրուել էր պրա Բակողութիւն-սրբագրութեամբ, որ նշանակում է՝ վենետիկեան այս «Օնորիալի Ա.» ձեռագիրը եթէ պակասաւոր չէ, ապա բնագիր ապագայ մրատարակութիւնը կարող է հիմնուել միայն սրա վրա:

⁶³ Առաջին դէպրուտ ենթադրելի էր յիմելոյ, որ գաղափար օրինակը կապուած չէր, և տարբեր գրիշներ օրինակում էին առանձին պրակմեր (գրչութեան մած կենտրոնական կիրառութեան եղանակ, որով միանձամաց կարող էին գրել անհրաժեշտ բանակի մի քանի օրինակ), երկրորդ դէպրուտ պէտք է մտածել, որ օգնող ները գրել են միանձական գրչի համարատ-դադարների ընթացքում:

զիկ եկեղեցոյ, եւ զպսակ ամենայն գիտնական եւ վարժ վարդապետաց՝ զերեքերան-նեանն զ Տէր Ստեփանոս, մականուն Տիրացու», որը «մեծաւ թախանձանաւք եւ գովասա-նական նամակաւ» Գրիգոր կաթողիկոսի կողմից «կոչեցեալ լինէր ի Կլայն, զոր Հոռոմ կո-չեն», իսկ նա «Հնազանդեալ հոգեւոր հրամանացն, ոչ դարձեալ ընդդէմ կամ պատճառեալ զծերութիւն կամ զինչ եւ իցէ, այլ որպէս վայել էր իւրում զուարթ եւ զուարճածադիկ ա-լացն, իլու⁶⁴ եւ հապտակ եղել վեհին եւ սիրալիր կոչողին, յուղի անկեալ պատրաստե-ցաւ առաջիկա ճանապարհին, ընդ իւր տարեալ եւ զիս, եւ բազում աւթեւանաւք զանց ա-րարեալ, հասաք ի բաղձալին, եւ ի տեսանելն զիրեարս՝ մոռացաք զաշխատութիւն» (Վնտկ Զ., 610), Ստեփանոս Տիրացուն «ի լինելն» այնտեղ «ետես զգիրքս զայս եւ փա-փագեաց, որպէս ընդդէմ ծաղկանցն՝ գործողն քաղցը եւ ախորժ ճաշակացն, սապէս եւ հայրս իմ ըստ հոգւոյ հրամայեաց շարա[լ]արել ի քարտիզի զտէսիլ մաքրեցելոյն ի կրա-կան ախտից՝ որ ի մեզ, եւ զԿաթողիկէիցն թուղթ, զոր բացայայտեալ էր իմաստուն եւ հանճարեղս (բառ մը ջնջուած)⁶⁵ եւ զՊատմութիւն սրբոյ վկաին Քրիստոսի Սարգսի զաւ-րավարիի»:

Ընդունուած եւ բնական է, որ գրիչը պատուիրատուին, այս դէպքում⁶⁶ նաեւ աշա-կերտն ուսուցչին («Հայրս իմ ըստ հոգւոյ») եւ փոքրաւորն իր մեծաւոր-եպիսկոպոսին («իմում տեառնս»), պէտք է որակէր գովարանական ածականներով, սակայն Յակոբի գոր-ծածած որակումները սովորականից վեր են եւ չափազանց հիացական ու մեծարող. նկա-տի ունենալով քաղմանս՝ Ստեփանոսի անուանը նախորդող մասը, նաեւ վկայակոչելով Գ. Զարրհանելանին՝ «գովութեամբ կը յիշէ զսա նաեւ ներսէս Լամբրոնացին, բայց յանուա-նէ գրաւոր գործ մը չի յիշուիր Ստեփանոսի»⁶⁷, ամենահաւաւանականը համարում ենք այն, որ Ստեփանոսը եղել է բնատուր տաղանդով օժտուած եւ արդիւնաշատ ուսուցիչ-մանկա-վարժ:

Ապա՝ «Եւ զկնի աւուրց այլ ճանապարհ առաջի եղաւ իմում տեառնս եւ կաթողիկոսին Հայոց, զի կոչեցեալ եղեն⁶⁸ ի Լեւովնէ, որ յայժմ զվալլընջուցն ի մերմէ ազգէս եւ զընկե-ցեալն յերեսաց տեսողէն զթագաւորականն, զոր ունէին հայք, սա միայն ստացաւ զաւ-գոստուսական եւ զծիրանափայլ պատմուճանն եւ ընկալաւ աւծումն, որպէս զմեծն Տրդատ, կամակցութեամբ արիական ազգին յունաց⁶⁹, բերեալ նմա նշան զիսաշանիշ թագն»: Ա-

⁶⁴ Հյատու. Բ. 441. ծ. 5. «Այսպէս զրուած էր՝ վանցի արտասանութեամբ, փոխանակ հլու զրոնոյ:

⁶⁵ Հյատու. Բ. 441. ծ. 6. «Պակասի անուն, որ է Ս. Ներսէս Շնորհալի, մոյս ինքն է եւ յիշեալ Ս. Սարգսի պատմութեամ հնդիմական»:

⁶⁶ Հ. Գ. Վ. Զարրհանելան, նշ. աշխ., էջ 702:

⁶⁷ Հյատու. Բ. 442. ծ. 1. «Ի Հոռոմլակէ կոչունցան յարբունիս Լեոնի Ա.» Բմնու.՝ Սիսուան, էջ 471. Թագաղորու-թեամ հնադէսիմ՝ «չիք երկրպեն, զի զոյին և բազում այլ եպիսկոպոսք՝ ի մարզից Հայոց Մնծաց՝ Բրափրեալք, թէ եւ ոչ էր մարդ ամենազն եպիսկոպոսաց համահաւաքն, ըստ Կիրակոսի. որպիսիք են, յիշեալն ի սմանէ Անա-միա եպիսկոպոս Սերաստիոյ, և յայլմէ յիշատակազրէն Ստեփանուն Տիրացու մականուանեալն՝ արքապիսկո-պոս Վամուսպապ. Յայլ է թէ ընդ տսիմ՝ առնոր տանէր ընդ իր կաթողիկոսն՝ և զեպիսկոպոսն հայրա-պետանոցի տան իրոյ, և զատագ երիցւանն և զպաշտունապա՝ զուգակցել ընդ համարէն ուսադի եկեղեցաց Սիսուան, սրբազնապոյն իմն և մեծապոյն քան զոյգումն յաշխարհախումք ժողովոցն Հայոց՝ կազմելով յասմ համիսական առող, յետ բազում և երկար առորց և ամաց դադարման ալազումակ համիսակալլութեամբ»:

⁶⁸ Հյատու. Բ. 442. ծ. 2. «Այսպամամք զրուած է, փոխանակ Ֆունձաց»:

զագայ թագաւորը կաթողիկոսին «պատուասիրաբար» կանչել էր, որպէսզի «աւծցէ զնա որբարար եւ մաքրագործակ մեռնաւն եւ պսակեացէ զգլուխն խաչանշան դրոշմաւ»:

Այնուհետև շարունակում է՝ «Եւ հոգեւոր տէրն ընդ իւր տարեալ զիմ տէրն՝ յաղագս ննջաս գիտութեանն եւ կատարեալ իմաստութեանն եւ անարատ մաքրութեանն եւ հոչակաւոր եւ բարի անուանն, որ ի տղայական տիցոցն մինչեւ ի կատարեալ ծերութիւն առ դուրս իմաստութեան դեգերեալ... որպէս արդիւնական վարդապետս եւ տէրս իմ՝ որպէս զարեգակն փայլեալ ի մէջ իւրոցն նմանեացն, զի զոր աւրինակ յաստեղս զարեգակն, որպէս եւ ի բնաւ իմաստունս երեւեալ, զի այս զգալի արեգակնս զտեսանելի աշխարհս լուսաւորէ, իսկ սա՝ զհոգի եւ զմարմին առհասարակ ճառագայթաձեւ յաւրինէ: Այս արեգակն զբոյս եւ զտունկ ատոքացուցանէ, իսկ սա՝ զմտաւոր եւ զիշխանականն առ երկնիւքն բարձրացուցանէ: Այս արեգակն զժախահչոտ⁶⁹ եւ զիտոնաւուտ վայրս սարաւատեալ զամաքեցուցանէ, իսկ սա՝ զնեխութիւն եւ զաղտեղութիւն հոգւոց եւ մարմնոց հրացայթ եւ լուսատեսակ գործէ... սա՝ զմոլորեալս յուղիդ եւ բարի ճանապարհէն անվեհեր եւ անմոլար առ երկնայիշին եւ խաղաղ նաւահանգիստն Քրիստոս հասուցանէ, զոր մաղթեմք... շարամնաբար մնալ մինչեւ ի խոր եւ խորին ծերութիւն, եւ յետ աստեաց՝ յաթոռս առափելոցն եւ ի տաղաւարս մարգարէիցն...» (Վնտկ Զ., 611):

Ապա խնդրում է. «Եւ զիս՝ զտառապետ Յակովը՝ զսակաւ աշխատողս, եւ զամենաբարի զհարազատն իմ զծովաննէս, զընտիրն ի բեմբականս եւ զանյաղթ յերաժշտականս եւ զանձանձրոյթն ի գրչութեանն հոնջ (իմա՝ խոնջ՝ Գ. Տ-Վ.) եւ զգովելին յամենայն բարեմեռութիւն, եւ զ Գիորդ եւ զծողսն իմ բարի մասին արժանի արարէք յիշմամք... ընդ նմին եւ զամեներջանիկ կրաւանոր եւ զբարի հոգի զհայր Յակոր, որ հայր է վանից եւ զհաւատարիմ եղբարս՝ զ Դասիթ եւ զ Սարգիս հանդերձ [այլովք] յիշեսջիք ի Քրիստոս զկազմող գր[ոցս]»⁷⁰:

«Եւ գրեցաւ ի Ունէ (1198) լուսերանգ եւ հրաշապատում ճառս առաքելագիծ մատենիս՝ բազմազան բարութեամբ եւ իմաստութեամբ լցեալ, զոր Տէրն մեր եւ Աստուած վայելել տացէ Տէր Ստեփիամոսի, մականուն՝ Տիրացու, բազում ամաւք, խաղաղական կենաւք եւ առողջ մնալ հոգւով եւ մարմնով, եւ իւր ժառանգին՝ Տէր Սարգսին նորընձայ եակիսկոպոսի՝ բարի եւ իմաստուն պատանեկի, զոր ընտրեաց եւ կացոյց⁷¹ իւր փոխան եւ տեսուչ աննապատի Սուլը Խաչի ստացուածոց եւ ամենայն գոյից բա[զում] եւ պէսպէս պնդութեամբ, կոտակաւ եւ գրով, կամակցութեամբ եւ յաւժարութեամբ եակիսկոպոսաց եւ վարդապետաց եւ համաւրէն քահանայից եւ //անց, այլ եւ դատաւորաց եւ իշխանաց Շամիրամչէն⁷² // քաղաքի եւ այլ գեաւոլից եւ //այ...» (Վնտկ Զ., 612):

⁶⁹ Հյատմ. Բ. 442. ծ. 3՝ «Այս տեղ այլ իս փոխանակ ժամանուո գրելու»:

⁷⁰ Վնտկ Զ., 611՝ կարդացել է. «զամէներջամիկ կրթանալու ու զբարի մողի զմայր Յակովը Այր/րիվանից և զիաւատարիմ եղբայրն զ Դասիթ և զ Սարգիս հանդերձ [...] յիշնաշիք ի Քրիստոս զկազմող Գր/իգոր/»: Իրական կազմողը երևի Սարգիսն է, ալլեւ ակնյալն է, որ ձեռագիրը կազմուել է Ս. Խաչում, ո՞չ Հռոմելապում:

⁷¹ Հյատմ. Բ. 442՝ կարդացել է «կառոյց» և ծ. 5՝ «Հաւանօրէն կացոյց պիտի ըլլար»:

⁷² Հյատմ. Բ. 442. ծ. 5՝ «Որ է Վան քաղաքն»:

Զեռագրի վերջին՝ 276ը էջին ունի հետեւելը. «Եւ ընդ աւանդել հոգւոյն տիւ եղել⁷³, այս վայ հազար բերանով զյետ մնացեալս, որ զրկեցաք ի քաղցրահոս յաղթիւրէն եւ յուրտածաւալ ճառագայթիցն, զի ի մեծի երկշաբաթողս խաւարեցաւ [արեգակն] մետուղիւն // Տէր Ստեփանոս մականուն Տիրացու// Ա. Թու» (Վնտկ Զ., 614)⁷⁴:

Փորձենք հնարաւոր չափով պարզաբանել շատ արժէքաւոր այս յիշատակարանի առաջցրած հարցերը.

ա. Շարադրանքի սկիզբը գրուած է անցեալ անկատար (անցեալ ներկայ) ժամանակով. Հռոմելայ հրաւիրուելը՝ «կոչեցեալ լինէր», այլոց՝ իրեն օգնելը՝ «գային առ իս... գրէին», ապա՝ անցեալ կատարեալով. «այլ ճանապարհ առաջի եղաւ», որովհետեւ թագադրման հանդէսին մասնակցելու համար «կոչեցեալ եղեն» Տարսոն: Ստացողի գովարանման ընդարձակ մասն աւարտում է խնդրանքով՝ յիշելու իր միաբանակիցներին, յատկապէս՝ «զհայր Յակոբ, որ հայր է վանից», որ, անշուշտ, յաջորդող մասում յիշուող «Սուլը Խաչի» անապատն է: Ապա նշում է ձեռագրի գրչութեան թուականը՝ ՈԽէ (1198), Տիրացուի կողմից Սարգիս նորընծայ պատանի եպիսկոպոսին «իիւր փոխան եւ տեսուչ» նշանակելու եւ այդ՝ Շամիրամաշէնի (Վանի) ամբողջ ժողովրդի ու հոգեւորական եւ աշխարհական իշխանաւորների կողմից հաստատել տալու փաստի արձանագրմամբ, վերջացնում է նոյն Սարգսին ուղղուած բարեմաղթանքներով:

Հստ այս ամէնի պարզ է միայն այն, որ ձեռագիրը 1198 թ. գրուել է Հռոմելայում «իշարադրելն իմում անդ», սակայն անյայտ է մնում, թէ ե՛րը է Տիրացու եպիսկոպոս գնացել Հռոմելայ (նոյն 1198ին, թէ՞ աւելի վաղ), ե՛րը է վերադարձել այնտեղից, ապա՝ ե՛րը է գրուել յիշատակարանը: Միաժամանակ՝ ակնյայտ է վերջինիս գրուելու տեղը՝ Վասպուրականի Ս. Խաչ վանքը (ո՛չ Հռոմելան՝ ինչպէս կարծել է՝ Ե-ԺԲ., 293): Տիրացուի մահուան արձանագրումն արուած է գլխաւոր յիշատակարանից տարրեր յիշատակագրութեամբ, որի վերջը, ցաւօք, եղծուած է, ուստի խնդրական է մնում նաեւ նրա մահուան տարին: Թէեւ առ այս գրուել է՝ «վախճանած 1200ին» (Ակին. 22) եւ յղուած՝ Յիշ-ք, 612-4, սակայն այս էջերում չկայ ոչ միայն որեւէ թուական, այլեւ՝ Տիրացուի մահուանը վերաբերող որեւէ ծանօթագրութիւն, իսկ անուանացանկի նրան վերաբերող մասում (Յիշ-ք, 1129), կրկին՝ առանց որեւէ ծանօթութեան կայ խաչանիշով «1202 թ.»:

Վերջինս հիմնուած է յիշատակարանի աւարտին՝ «Տիրացու // Ա. Թու» վերաբերող՝ Ալիշանի հետեւեալ դիտարկման վրայ՝ «Անշուշտ մահուան թուականն է, որոյ միայն այդ Ա. վերջի թիւն որոշ կ'երեւէ, եւ գուշակուի որ առջի թիւերն էին Ո՛՛. կամ ՈԿ, որ է 1202 կամ 1212 թուական Քրիստոսի, հաւանօրէն առաջինն» (Հյատմ. Բ. 443, ծ. 1): Ալիշանն

⁷³ Հյատմ. Բ. 442, ծ. 9՝ «Անշուշտ շարունակուած էր Ստեփանոսի վարքն, որ զրոց հնութեամբ կորտուեր է, եւ միայն մահուան յիշատական է մնացեր»:

⁷⁴ Վնտկ Զ., 614՝ կարդացել է. «Եւ ընթ (..) սի եկ Բոգ(....) եղեւ, այ (Աստուծո՞յ) զայն Ռ. բերանով զյետ մնաց/եալ/քս, որ զրկեցաք ի քաղցրալոյս յաղթիւրէն եւ (...) տած աս(...) ճառագայթիցն, զի ի մեծի երկշաբաթոշն խասարեցա (..) եան (...) Տէր Ստեփանոս մականուն Տիրացու// ա թու»: Հստ՝ 271ը էջի մետաղայ յիշատակագրութեան (զրիչ՝ Յոհաննէս)՝ ՈՂԵ - 1246 թ. «Սովանասս» անունով մէկը «զգիրքս զալս» զմել է ի յիշատակիր, ծնողների և «գուակաց... Եղորդամէիմ և Փուամէկամիմ և որ լինելոցն են» և իր ամուսին՝ «Մարիամու» և մրա ու իր կենաչերի և ննչեցեալ հարազատամերի (Վնտկ Զ., 614):

ըստ ամենայնի տրամաբանական հաշիւ է արել՝ 1198ին ժեր էր, ուրեմն մահը կարող էր պատահել գուցէ 1202ին (ո՛չ 1212ին): Մէկը թէ միւսը՝ քանի դեռ նոր տեղեկութիւններ չունենք, պէտք է Ստեփանոս Տիրացուի մահուան թուական ընդունենք այս 1202ը, ապա՝ ենթադրենք, որ յիշատակարանը գրուել է 1199ից՝ Հռոմկայից վերադառնալուց յետոյ եւ 1202ից առաջ, գուցէ նախընտրաբար 1200ին:

ՍՊԻՐԻԲ ԽԱԶՈ անպատր անպայման Շամբրամաշէն-Վանին մօտ էր, այլապէս Տիրացուն կարիքը չէր ունենայ Սարգիս նորընծայ եպիսկոպոսին իր փոխարքն նրա «տեսուչ» նշանակելը հաստատելու Վանի ժողովրդի «կամակցութեամբ եւ յաւժարութեամբ»: Այս անուններից մակարերելով, Զարբհանալեանը Տիրացուին կոչել է «Վարագայ կամ անոր մօտ Խաչի վանաց առաջնորդ» (Պտմթ. Դպր., 702), Ալիշանը՝ «արքեպիսկոպոս Վանտուսպայ» (Ախուան, 471) կամ «եպիսկոպոս Վանայ Ս. Խաչին» (Հյատմ, Բ., 441), Աճառեանը՝ «Վարագայ վանահայր» (Անձբո. Դ., 617), Ակինեանը՝ «Վասպուրականի Ս. Խաչ վանքի առաջնորդ» (Ակին. 22), Ոսկեանը յիշատակարանիս «անապատիս Ս. Խաչի» դարձուածը մէկնարանել է՝ «քայց կարծեմ այս տեղ Ս. Խաչ ըսելով աւելի Վարագի Ս. Նշան վանքը հասկնալու է»⁷⁵:

Այս անորոշութեան, աւելի ճիշտ՝ շփոթի պատճառն այն է, որ «Սուրբ Խաչ» կամ «Սուրբ Նշան» անունով վանքեր եւ եկեղեցիներ թէ՝ ընդհանրապէս Հայաստանում եւ թէ՝ Վասպուրականում շատ են եղել: Վասպուրականում Ս. Խաչ (Ս. Նշան) անունն ունէին նաեւ Աղթամարի եւ Վարագայ վանքերի մայր եկեղեցիները, բայց եթէ խօսքը նրանցից մէկի մասին լինէր, հազիւ թէ չգրուէր նաեւ նրանց առաւել յատկանշական՝ Աղթամար կամ Վարագ անունը (նշանաւոր Ապարանից Ս. Խաչը Մոկսում էր՝ Վանին մօտ չէր): Ուրեմն՝ Տիրացուն «դէտ եւ տեսուչ» էր այն թեմի, որի առաջնորդանիստն էր՝

«Ս. ԽԱՉԻ ՎԱՆՔԸ. «Վանի դաշտի հարաւ-արեւելեան կողմը, քաղաքէն գրեթէ մէկ ժամ հեռու, Կուռուպաշ կամ Խուրուպաշ՝⁷⁶ Հայաբնակ գիւղի մերձ, բլուրի մը գագաթին... կը բաղկանայ եկեղեցիէ մը, մատուոէ մը, գաւիթէ մը եւ քանի մը սենեակներէ: Եկեղեցին 9 մետր երկար, 5½ մետր լայն եւ գրեթէ 12 մետր բարձր է: Անտաշ քարերով շինուած է եւ առանց սիւնի... Անոր Հնաշէն դրութիւնը ենթադրել կու տայ թէ՝ շատ հին հաստատութիւն ըլլալու է... Աւանդութեան համաձայն... Հիմնուած է Ս. Թաղէոս առաքեալէն՝ Ս. Աստուածածին անունով, սակայն յետոյ Ս. Խաչ կոչուած է՝ Հռիփսիմեան կուսաններու ունեցած Ս. Խաչի մասունքին այս տեղ դադարումէն... Մեր մատենադարանի Յայսմաւուրքներէն մէկուն մէջ նշանակուած է՝ [Հռիփսիմեանները] «Եկին ի գաւառն Տուրայ, ի դաշտն Վանայ, ի յոտն Վարագայ... ի վայելուչ վայրի, որ եւ նոյն տեղին կոչեցաւ Սուրբ Խաչ, եւ այժմ ասի Խուրուպաշ» (Տաշեան, Մայր Ցուցակ, էջ 63)... Ս. Խաչի թեմական գիւղն է Կու-

75 Վասպուրական-Վաճի վաճքերը, Ա. մաս... Գրեց Դկտ. Հ. Համազասպ Ռոկնաման... Վիեննա, 1940, էջ 25:

76 «Վաճի Ամանգի Վաճի գաւառում, Վաճ-Տոսպ գաւառակում: Գտնում է Վաճի Այգեստան թաղամասից 5-6 կմ հարաւ-արեւելք, Վաճի դաշտը հարակի եղերող բլիի (Սուրբ Խաչի) ատորութիւն, համանառն գետակի ձախ ափին: Գիւղից արդ. անցնում է Վարագայ վաճը տանող ճանապարհը»: ՏԲ, Գ. էջ 279. Բնմտ. ՏԲ, Բ. 650՝ «Ս. Խաչ»:

ռուպաշ⁷⁷: Ունեցած է բաւական կալուած եւ սիրուած է իբրև ուխտատեղի... Ենթակայ եղած է Վանի առաջնորդարանին»⁷⁸:

Մի այլ նկարագրութիւն՝ «Վանայ այգեստանի հարաւը 2½ ժամ հեռու կը գտնուի վանքս, լայնածաւալ եւ բարձր բլրոյ մը կողին վրայ: Կառուցուած է կոփածոյ քարերով, խիստ հին ժամանակ: Ունի սքանչելի տեսարան, մանաւանդ հիւսիսային կողմն, որ ամբողջ Վան քաղաքը կը տեսնէ... Վանքիս հնաշէն վիճակն կրնայ այցելուաց յիշեցնել առաքելական եւ թերեւս կռապաշտական դարերն իսկ: Վանքն 5-10 վայրկեան հեռու առաքելական եւ թերեւս կռապաշտական դարերն իսկ: Վանքն 5-10 վայրկեան հեռու քարայր մը կայ, զոր կ'անուանեն Կուսանաց այրը՝ Հռիփսիմեան կոյսերի պատուին, Ս. Խաչ անուն ստացել է «Հռիփսիմեի կուրծքէն կախուած կենաց փայտի մասն» այստեղ մնացած լինելու պատճառով. «Վանքը վանեցւոց համար տարին քանի մը անգամ ուփատեղի է»⁷⁹: Վանքի շէն ժամանակի վերջին ականատեսի վկայութիւնը. «Կը գտնուի Վանայ արեւելա-հարաւ բլրի վրայ... 1915 թուականի Վանայ ինքնապաշտպանութեան կոիւներու ընթացքին Ս. Խաչի վանքն ալ թալանուեցաւ, այրուեցան շինութիւնները, եւ կորստեան մատնուեցան ամբողջ ձեռագրերը»⁸⁰:

* * *

Ստեփանոս Տիրացուի գործունէութեան կիլիկեան շրջանին վերաբերող՝ վերը բերուած վկայութիւնները համազրելով 1198ի ձեռագրի յիշատակարանի տեղեկութիւններին, նախ տեսնուած ենք, որ Գրիգոր Ապիրատ կաթողիկոսը, երեւի հիմանականում Տարառում Լեւոն իշխանի թագալըրութեանը ներկայ լինելու համար, «մեծաւ թախանձանաւք եւ գովասանական նամակաւ» Վասպուրականից Հռոմէլայ էր Հրաւիրել ոչ թէ իրեն ի լրոյ յայտնի եւ անծանօթ մէկին, այլ՝ իր Հօրեղբայր Ներսէս Շնորհալու օրերից վաղածանօթ եւ, ըստ ամենայնի մտերիմ մարդու՝ Տիրացու մականուամբ Ստեփանոս Թակովքացի եպիսկոպոսին⁸¹: Այնուամենայնիվ, 1170ականներին կաթողիկոսարանում եւ Կիլիկեան Հայաստանի եկեղե-

⁷⁷ Եմթաղեղի է, որ, շատ ալլ զիսդերի Ամամ, Կոտուպաշը սկզբանակէս առաջացած լինի վաճքի սեփական հողերի վրայ՝ որպէս Օրա սպասարու-մշակմերի բակավայր:

⁷⁸ Վասպուրական-Վամի վաճեղը, Ա. մաս, էջ 231-5:

⁷⁹ Հ. Էփրիկեան, Պատկերազարդ բնաշխարհիկ բատարան, Բո. Բ., Գիրք Ա. (Թ-Կ), Վեճատիկ - Ա. Ղազար, 1907, էջ 146:

⁸⁰ Յովհաննէս վ. Հիւնեան, Ձշ. աշխ. (տե՛ս ծ. 7), 15ա:

⁸¹ Այստեղ ի մի բերուած տեղեկութիւնների ուժով փարատում են Ամառեամի կասկածները, թէ իր Հ^Թ 103 (Տիրացու) և Հ^Թ 104 (Թակովքացի) Ստեփանոսները «չեն կարող այն լինել», այդուհամերձ, տարրերակման ամենիմ լինելը ցուց տալու համար բերու ենք Օրա փաստարկները. «որովհետեւ եթէ Հ^Թ 103 Ստեփանոս Տիրացու հրագրուել է Ապիրատի կողմից, այդ պիտի լիներ ամսաւուշը 1194 թուին. ჩետեսաբար չի կարող նա լինել ուսուցիչ Լամբրոնացու, քանի որ Լամբրոնացին արդէն Վարդապետ էր 1168 թուին: Նմանապէս Լամբրոնացին «Եր ընդ եղրարս» եւ միւս մեկմուտիւնները գրել է 1177, 1178 և 1179 թունին (Տաշեան, Ցուց. 639ա), ուստի չէր կարող 1194 թուին եկող Ստեփանոսը խնդրած լինել: Վերքապէս, Լամբրոնացին մեռա 1198 թուին, որ 1194 թուից միամն 4 տարի մնուի է: Վերևում (Հ^Թ 82) յիշատակեցինք ճանա մի ուրիշ Ստեփանոս վարդապետ, նոյնպէս կոչուած Յակոբից, Շնորհալու դրամ երեց, որ գործել է 1172-3 թունին: Սա էլ անշուշտ տարրեր է Վարդապահ վամահայր Հ^Թ 103 Ստեփանոսից, բայց կարող է լինել Լամբրոնացու ուսուցիչ Հ^Թ 104 Ստեփանոսը» (ԱռձԲո. Դ. 617):

ցական միջավայրում մեծ հեղինակութիւն եւ գիտնական-ուսուցչի համբաւ ունեցող Ստեփանոս Յակովբացու Վասպուրական տեղափոխուելու ժամանակն ու Հանգամանքներն անյայտ են մնում: Որոշակի է միայն, որ Լամբրոնացու «Առ Լեւոն» թղթի գրուելու ժամանակ՝ 1195ին⁸² նա երեւի վաղուց այնտեղ էր: Նամակում նրա կողմանակիցների թուարկման սկիզբն այս է. «Նոյն ինքն մեր աշխարհս եւ սուրբ լեառնս, եւ որ ի սմա Հովիւք սուրբք, եւ բոլոր գաւառն Վասպուրականի, եւ որ անդ հոչակաւոր ուխտն Վարագ, եւ երեւելի արքն Ստեփանոս Տիրացուն⁸³ ուսուցիչն մեր, եւ Գէորգ ճգնաւորն, եւ Ստեփանոս մեր ուսումնակից, եւ Քրիստոսատուր եւ Տիրմոթիչոս ճգնաւորք, որք ականատես լեալ են մեզ եւ որ առ մեզ ճշմարտութեանս հաւանեալ, եւ երանեն թէ կարող էին ձայնակցել»⁸⁴:

Այսինքն՝ Կիլիկիան («մեր աշխարհս», Սեւ կամ Կիլիկիան Տաւրոսի վանքերը («սուրբ լեառնս»), ամբողջ Վասպուրականը եւ այնտեղ՝ Վարագայ ուխտը եւ իր ուսուցիչը, այլեւ՝ իր ուսումնակից Ստեփանոսը⁸⁵ եւ իրեն ճանաչող երեք ճգնաւորներ, որոնք նոյնակս Վասպուրականում են: Պակաս ուշագրաւ չէ նաև թուարկման շարունակութիւնը, որ կարեւոր է ընդհանրապէս Կիլիկիայի եւ բուն Հայաստանի միջեւ ժամանակի եկեղեցական հաղորդակցութեան եւ յարաբերութիւնների աշխուժութիւնը եւ սերտութիւնը լաւ պատկերացնելու համար. «Բոլոր գաւառն Տարօնոյ, եւ որ ի նմա իմաստուն եպիսկոպոսն եսայի, եւ վարժապետ Թէոդորոս, որ զմերս բարեհոչակեն բարեկարգութիւն եւ երանեն զհաղորդեալսն: Գաւառն Եկեղեաց եւ լեառն սրբոյն Գրիգորի, եւ որ ի նմա Հարքն եւ եպիսկոպոսն, որք գրովն իւրեանց բարեհամբաւեն զմեր ճշմարտութիւնս, եւ աւաղեն վասն աղքատութեամբ եւ անօրինաց բոնութեամբ ի սմանէ վերջանալոյ: Իշխանքն Խաչենոյ եւ որ անդ վանորայք, որք զաշակերտն մեր զ Յովսէփ եւ զկարգաց մեր վարժապետ՝ որպէս գհրեշտակ պատուեն, եւ կաթողիկոսութեանն Աղուանից ընծայեն»⁸⁶:

Սակայն Ստեփանոս Յակովբացու Վասպուրական տեղափոխուելու փաստն առաւել ուշագրաւ է մի այլ տեսանկիւնից: Յայտնի է, որ Գրիգոր Գ. Պահլաւունի կաթողիկոսի (1113-1166) ընտրութիւնից անմիջապէս յետոյ, Դաւիթ Ա. Թոռնիկեանի (1113-1165^o) ձեռքով, հաստատուել է Աղթամարի Հակաթոռ կաթողիկոսութիւնը⁸⁷, որի մասին կայ Հետեւեալ իրաւացի գնահատականը. «Գագկայ իշխանութեան սահմաններէն անդին չանցաւ իր բոնաբարած իրաւունքն, մանաւանդ աւելի ամփոփ էր եւ եւս աւելի ամփոփուեցաւ յե-

⁸² Ազգապատում, Ա. « 1042, էջ 1777՝ նամակի գրութեան ժամանակը համարում է «1195ի սկիզբները». հմտ. Սիսուած, 552 (Զաւ 461-2), Ակի. 214-5: Նամակի գնահատութիւնը՝ Ազգապատում, Ա. § 1041-8 էջ 1770-83:

⁸³ Վարագի և իր ուսուցի անունները զատ-զատ նշելը ես մի անուղակի փաստ է առ այն, որ Տիրացու եպիսկոպոսը Վարագի Սուրբ Նշանութէր, այլ՝ Կոտուպաշի Ս. Խաչում:

⁸⁴ Թուղթ առ Լեոն, էջ 229:

⁸⁵ Հստ ամենալի՛ պս Ստեփանոսը ես մեր Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսին աշակերտների ուղարկում:

⁸⁶ Թուղթ առ Լեոն, էջ 229-30. Բնտեսում է իր լատին կողմանակից-շատագովների և Օրաց՝ առ այդ ցոյցերի թուարկումը:

⁸⁷ Տե՛ս Ազգապատում, Ա. § 928-9՝ էջ 1579-84:

տոյ»⁸⁸: Աւելին՝ նրա մահից յետոյ «գրեթէ դար մը լուռած են Աղթամարայ կաթողիկոս-ներուն անուանքն: Ընդունակ մէջ Դաւիթէն ետքը առաջին կաթողիկոս կը նշանակուի Ստեփանոս Նկարենայ, որ 1272ին վախճանած է, որով 1165-1272 դատարկ ձգուած է: Կուի Ստեփանոս Նկարենայ, որ 1272ին վախճանած է, որով 1165-1272 դատարկ ձգուած է:

Ներսէս Շնորհալիի կամ Հոռոմկայի կաթողիկոսարանի դրան սարկաւագը դարձել է առաջնորդ Վասպուրականի Ս. Խաչի, որի թեմի մէջ ըստ ամենայնի մտնում էր նաեւ նրա կենտրոն Վան քաղաքը (այլապէս՝ Սարգիս եպիսկոպոսին իրեն յաջորդ հաստատելու համար վանեցիների համաձայնութիւնն ստանալու պէտք չէր ունենայ): Սա արդեօք չի՞ նշանակում, որ Աղթամարի կաթողիկոսութեան իրաւասութեան եւ իշխանութեան սահմաններն այդ ժամանակ շատ նեղ կամ անծովկ էին, որով լիովին իրաւացի է Օրբանանի խօսքը, թէ Դաւթի արածը «շատ մասնաւոր գործ մըն էր»⁹⁰, ուստի եւ իրենից յետոյ, ըստ ամենայնի, հակաթոռ կաթողիկոսութիւը տեւական ընդհատում է ունեցել:

ԱՄՓՈՓԵՆՔ. կարծես կարողացանք նորայայտ վաւերական դիմանկարի կողքը դնել
Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսին վերաբերող մատենագրական ցրիւ տեղեկութիւնները
եւ նրանցով գծել իր ժամանակի այս նշանաւոր գիտնական-մանկավարժի կենսագործու-
նէութեան թէկուզ եւ աղոս ուրուագիծը, որի փոքր մասով ենթադրական-հաւանական,
յեծ մասամբ՝ ճշգրիտ դրուագները հետեւեալներն են. ծնուել է հաւանաբար Լեռնային
Կիլիկիայում, շուրջ 1120 թ., 80ամեայ մահացած լինելու ենթադրութեան հիման վրայ՝
ծննդեան պայմանական թուական ենք ընդունում 1122ը: «Ի տղայական տիղոցն» մտել է
երեւի Հաճընի մօտի Ս. Թակրո վանք, այստեղ էլ ստացել է «արդիւնական» կամ «աս-
տուածաբանական վարդապետ»ի համբաւ, ապա անցել է Հռոմեայ, եղել կաթողիկոսարա-
նի «դրան սարկաւագ», Ներսէս Շնորհալու ձեռքով եպիսկոպոս ձեռնադրուել: Երեւի
1168ից առաջ, նոյն Շնորհալուց Գրիգոր Ապիրատի նուէր ստացած ՄՄ Հ^Յ 311 1066 թ.
Աւետարանը «վերստին նորոգել» է «արտաքուստ կուսէ... գեղեցիկ մետաքսէիւք եւ ա-
կամքը պատուականաւք, ընդելուզեալ ի մարգարտոյ մեծագնոյ»:

1169-1172 թթ. եղել է Սեւ լեռների Բարսեղեանց անապատի առաջնորդ, ուր նոյն տարիներին նրան աշակերտել է Ներսէս Լամբրոնացին (յայտնի է նաև Նրա մի այլ աշակերտի անունը՝ Ստեփանոս): Այստեղ նրա պատուէրով Լամբրոնացին երեւի թէ 1172 թ. գրել է Յովհաննու Հանգստի մեկնութիւնը: Նոյն տեղում եւ նոյն տարիներին (գուցէ կրկին պայմանականօրէն ընդունենք 1170ը) Յովհաննէս գրչի եւ ծաղկողի՝ ձեռքով նրա համար գրուել եւ ճոխ նկարազարդուել է մեր գրքային գեղանկարչութեան մէջ առայժմ առկայ՝ ձեռնալիքութեան Հնագոյն պատկերն ունեցող ՄՄ Հ^ե 2098 պատառիկի մայր ձեռագիրը, որ հետագայում անցել է Ստեփանոս Օրբէլեան պատմագրին եւ նրա հօրեագորոդի Յով-

⁸⁸ Գալազանացիոր կաթողիկոսաց Աղթամարայ. պատմական ուսումնասիրութիւն, Գրեց Հ. Ներսէս վ. Ա-կմնան, Վիեննա, 1920, էջ 10:

⁸⁹ Նոյն տեղում, էջ 37. «Բիւզանդիան» թերթի հրապարակմամբ Ալիքանամին յայտնի «Հաւաքարան» ը լե՛ս - Հաւաքարան անուանց կաթողիկոսաց (Աղթամարաց), Մանօթութիւններով լոյս ը մծացեց... Մեսրոպ Վ. Մաքու- նեանց, Ս. Էշմիածին, 1916, էջ 36-40:

⁹⁰ *Исаакианский. И., № 1579:*

Հաննէս Օրբէլին, աւելի ուշ՝ Կտուց անապատին, ուր եւ 1915 թ. այն ըստ ամենայնի յօշու տուել է: 1173 թ. Սկեւուայում Գրիգոր Մլիճեցի^o գրչին «աւժանդական» է Շնորհալիքի պապասաւոր Կոստանդին քահանայի համար գրելու Տիգրանակերտի Ս. Կիրակոս եկեղեցուն պատկանած Աւետարանը, 1195 թ. առաջ Վասպուրականում առաջնորդ էր Կուռուպաշի Ա. Խաչ վանքի եւ թեմի, որի մէջ ըստ ամենայնի մտնում էր նաեւ Վան քաղաքը:

1198 թ. Գրիգոր Ապիրատ կաթողիկոսի հրաւէրով գնացել է Հռոմկայ, այնտեղ իր սպասաւոր Յակոբին գրել է տուել Ներսէս Շնորհալու Կաթողիկեայ թղթերի մեկնութեան վենետիկի Մխիթարեանց Հ^ր 1462/1063 ձեռագիրը, ապա, կրկին՝ հրաւէրով, գնացել է Տարսոն եւ 1199 թ. Յունուարի 6ին ներկայ եղել Լեւոն Ա.ի (Բ.) թագադրմանը, վերադարձել Վասպուրական, երեւի իր հետ Հռոմկայ տարած եւ ձեռնադրել տուած Սարգիս նոր ընծայ եպիսկոպոսին կարգել «իւր փոխան եւ տեսուչ անապատի Սուրբ Խաչի» թեմի (վանքի առաջնորդն ուրիշ մէկն էր՝ «զհայր Յակոր, որ Հայր է վանից»), իսկ ինքն ապրելով «մինչեւ ի կատարեալ ծերութիւն, առ դուրս իմաստութեան դեկերեալ՝ մահացել է երեւի 1202 թուարկանին:

Այժմ համառօտ թուարկենք յօդուածիս մէջ արուած միւս ճշգրտումները եւ նորութիւնները.

ա. Պատառիկիս մայր ձեռագրի գրչութեան յիշատակարանը թուագրելի է շուրջ 1170 թուարկանով (ո՞չ 1300ով):

բ. Նոյն ձեռագրի մէջ առկայ՝ Յովկաննէս Օրբէլի յիշատակարանը թուագրելի է 1302ով (ո՞չ 1300ով):

գ. 1069 թ. ՄՄ Հ^ր 10434 Աւետարանի 288ա-9թ թերթերի վրայ գրուած հետագայ անթուական յիշատակագրութիւնները ԺԳ. դ. սկզբներում գրուել են Խարբերդում (ո՞չ Վասպուրականում):

դ. Պարզուած է շուրջ 1170 թ. Կիլիկիայի Սեւ լեռների Բարսղի անապատում ստեղծուած՝ առայժմ յայտնի միակ բարձրարուեատ ձեռագիրը, որ գրել եւ ծաղկել^o է ՅՈՎ.ՀԱՆՆԻՍ անունով մէկը՝ նորայայտ անուն միջնադարեան հայ մանրանկարիչների ցանկի մէջ:

ե. Բարսեղեանց անապատը Կիլիկիայում գործել է 1113-1307 թթ. ընթացքում, ապա՝ հտալիայում, ընդհուած մինչեւ 1650 թ.:

զ. Հայ մեկնողական մատենագրութեան հարուստ անուանացանկին գումարում է Ներսէս Շնորհալի կաթողիկոսի հեղինակած (վրիպմամբ մոռացութեան մատնուած) Կաթողիկեայ թղթերի Մեկնութիւնը՝ հեղինակային օրինակի արժէք ունեցող 1198 թ. վենետիկեան Հ^ր 1462/1063 ձեռագրով եւ հետագայ ժամանակների ուժ ընդօրինակութեամբ:

ՆԿԱՐՆԵՐԻ ՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆԵՐԸ

Նկ. 1. Վանի եկեղեցիներից մէկում՝ 1915 թ. վերջերին, առջեւում հայ կամաւոր զինուորներ, խորքում, ձախից Յովկաննէս վ. Հիւսեանը, աջից՝ Սմբատ Տէր-Աւետիսեանը. զննում են գրքերի բարբարոսաբար բզկտուած կոյտերը

Նկ. 2. Ջեռնադրութիւն. Ստեփանոս եպիսկոպոս, մականուն Տիրացու եւ անանուն կիսասարկաւագ. ՄՄ Պատառիկ Հ^ր 2098, 1ք

Նկ. 3. Ընծայում-օրհնութիւն՝ ստացող Մատթէոս կրօնաւոր եւ Թիսուս Քրիստոս. Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի ձեռ. Հմը 1796, 288թ